



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



5053

5054

5055

9(474925)

n - 95







ՀՀ, Եղանակ թիվ 69-ով մշ. բարեկար

# ԿԱՆՈՆԱԳՐԻԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ԽՄՐԱԴՐԵԱ, ՀՐԱՄԱՆ ԱՌ

ՔԱՐՁՐԱՇՎՈՐՀ ՆԱԽՈՎԱՀԻՑԻ

ԱՌ ԵՆԹԱՐԿԻ, ՀԱԽԱՍՏԱԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Խ Բ Հ Ա



9(47.925)

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ



Պ Օ Լ Ի Ա

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

2096

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՈՅ

Յ. Ն Ե Ր Ս Կ Ս Ի

ՅԱՐՉԲԱՇՆՈՐՀ ԱՐԵՎԱԿԻԿՈՎՈՒ

2454-57

8

ԿԱՆԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ



ԱՌԱՋԵՆ ԳԼՈՒԽ

Յացում՝ Ճշդութիւն, և վակերացում բարելի եւստույզ .

ՅՕԴ. 11n.— Կ. Պօլոխ Պատրիարք Բարձրաշնորհ  
Սրբազնութեան և Նախագահ՝ զԱղջային ժողովը կը  
բանայ ամեն տարի մայիսի առաջին եօթնեկին մէջ :

Բացման ճառով ընդհանուր տեսութիւն մը կու  
տայ աղջային զործոց նախընթաց տարվան վիճա-  
կին վրայ, և ժողովին ուշադրութեանը կը յանձ-  
նարաբէ առենական նոր շրջանն ըզբաղելու զլսա-  
ւոր խնդիրները :

Առենական շրջանը (<sup>1</sup>) մարտի վերջերը կը լմբն-  
նայ, յորում ժողովը կը փակվի, յորում սահմա-  
նադրապէս լուծանելի երեսվոխանաց պաշտօնը  
կ'աւարտի, եթէ ժողովին մասնակի վերանորոգումը  
այն տարւոյն հանդիպի :

Նոր ընտրութիւնը ասլրիլին կ'սկսին :  
Վարչութեան տարեկան համարատութեան ժա-  
մակետը կը հասնի :

---

(<sup>1</sup>) Session.

Երբեւ նախապատրաստութիւն՝ զոր նախագահ Սրբազնը կը հոգայ, բացումէն առաջ պատրաստ պէտք է ըլլան

և Ընտրութեանց տեղեկադիրները, որ առաջին նիստին օրակարգն (<sup>1</sup>) է դիւանին կազմութեան հետ.

Է Վարչութեան իւրաքանչիւր ճիւղին տարեկան համարատութիւնը, որ առաջին վիճաբանելի խնդիրն է դիւանաց կազմութեանէն ետքը:

**ՅՈՒ. 2.** — Բացման ճառէն անմիջապէս ետքը՝ նախագահ Սրբազնը կը հրաւիրէ երեսփոխանաց երիցադոյններէն մէկը առժամեայ առենապետ բազմիլ, եւ կրտսերադոյն մը՝ առենադպրութեան պաշտօն վարել:

Այս առժամեայ դիւանին գործն է՝ վաւերացում ընտրութեանց, եւ կազմութիւն Մայր Դիւանին:

**ՅՈՒ. 3.** — Ընտրութեանց տեղեկադիրները՝ որ նախագահ Սրբազնին ուղղեալ են ընտրող ժողովոց կողմէն, եւ՝ զորոնք Սրբազնը իւր վարչական խորհուրդին մէջ քննած եւ երեսփոխանէ մը Սահմանադրութեան պահանջած դրական ու ժիտական պայմանները լցված գտած է, ապահովութեան ծանօթագրով մը իւր Սրբազնութեան կողմէն դիւանին աւանդեալ են:

Առենադպիրը կը կարդայ նախ ընտրութեանց տեղեկադիրները, եւ դիտօղութիւններ՝ եթէ կան՝ կ'ըլլան, յետոյ ապահովութեան ծանօթագիրը: Ժողովը կ'արտասահէ իր վճիռը ընտրութեանց օրի-

(<sup>1</sup>) Ordre du jour.

նաւորութեանը վլայ, եւ Ատենապետը երեսփոխան կը հոչակէ<sup>(1)</sup> այն անունները որոց իշխանութիւնը վաւերական դատված է :

Նախագահ Սրբազնը կը հրաւիրէ անմիջապէս նորընտիր երեսփոխանները՝ եթէ ունկնդրաց մէջ են, դալ աեղ առնուլ եւ բազմիլ :

Եթէ չ'են, յատուկ նամակաւ կը ծանուցնէ իրենց ընտրութեան վաւերացումը եւ կը հրաւիրէ 'զանոնք յաջորդ նիստին ժողովին աշխատութեանց մասնակցիլ :

Օրինաւորութեան թերութիւն ունեցող աեղեկագիրը Նախաձեռնութեան դիւանին կը յղվի, եւ վաւերացումն ուրիշ նիստի կը մնայ :

Անմիջապէս կը ձեռնարկվի Ս. Դիւանին կազմութեանը :

### Բ. ԳԼՈՒԽ

Կազմութիւն մայր դիւանին

**ՅՈՒ. 4.** — Ժողովին դիւանը՝ որ եւ Մայր դիւան կ'ըսվի միւս դիւաններուն նկատմամբ, կը բաղկանայ մէկ ատենապետէ, երկու դերատենապետէ<sup>(2)</sup> եւ չորս ատենագլանէ՝ որոնք մէկ շրջանի համար կ'ընտրվին եւ վերընտրելի են :

**ՅՈՒ. 5** — Ատենապետը առանձին կ'ընտրվի

(1) Proclamer.

(2) Հրանոնչ. — Դերատենապետները դիւանը չ'են բաղմիր այլ միայն բացակայութեան առեն Ատենապետին փոխանորդելու համար :

բացարձակ առաւելութեամբ : Խոկ երկու դերատեսապետները միասին կ'ընաըրվին բազմանուն քըւէով (յօդ. 41), նոյնակա եւ չորս առենադպիրք :

Ասոնք իրենց ըստացած քըւէից առաւելութեան կտրովը՝ իբրեւ առաջին, երկրորդ, եւ կը նըկատվին :

Երկու գարձ քըւէարկութենէ ետքը, եւ առանում (¹) սլատահած առեն, համեմատական առաւելութիւնը կը բաւէ :

Քըւէից հաւսարութիւն սլատահած առեն՝ առենապետաց երիցադոյնն ընտրեալ է, եւ առենադպրաց կրտսերագոյնը, եթէ վիճակ չը պահանջմի դոնէ երկու ձայնով . Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով, առանց վէճի (sans débat) :

Երբ դիւանին մէջ հրաժարում սլատահի (յօդ. 410), եթէ հրաժարօղը առենապետն է, նոր ընտրութիւն կ'ըլլայ . բայց եթէ երկրորդն է հրաժարօղը, երրորդը երկրորդ կ'ըլլայ եւ նոր երրորդ մը կ'ընտրըլի : Խոկ եթէ առենադպիրներէն մէկը հրաժարի, հետեւորդն անոր տեղ կ'անցնի եւ չորրորդ առենադպիր մը կ'ընտրըլի :

**ՅՕԴ. 6.**— Առենադրութեանց արձանադիրքէն դատ՝ որոյ առաջին առենադպիրն է սլատասխանատւն, դիւանն ունի երեք տօմար՝ խնդրոց կարգի տօմար, խօսից կարգի տօմար, ներկայութեան տօմար . Պորոնք առաջին առենադպիրը կը բաշխէ իւր պաշտօնակցաց, հոկելով անոնց վրայ իբրեւ ընդհանուր առենադպիր :

(¹) *Ballottage.*

Մայր դիւանին կազմութենէն ետքը նիսաը կը վերնայ, ութ օրէն վերցոտին գումարվելու սլայմանաւ՝ նախաքննիչ դիւանաց կազմութիւնն ընելու համար, որ՝ իբրեւ առենական խնդիր՝ միշտ ստիպողական է ժողովին առջեւ, եւ վարչութեան համարատութիւնը լսելու համար, որ արդէն տպեալ եւ երեսփոխանաց ցրեալ է :

## Գ. ԳԼՈՒԽ

Կազմութիւն Նախաքննիչ դիւանաց

ՅՕԴ. 7.— Ժողովին մէկ մասը դիւաններու կը բաժնի, որո՞ք տարիէ տարի կը նորոգվին :

Ժողովը իր աշխատութեանց դիւրութեան եւ արդիւնաւորութեանը համար՝ իր դիւաններուն յատուկ ձեռնհասութեանը կը յանձնէ վիճականելի խնդրոց նախասլատրաստական քննութիւնը :

Այս դիւանները՝ Ձեռնհաս կամ Նախաքննիչ դիւաններ ալ կը կոչվին, որք են

ա. Ձեռնհասութեան (<sup>1</sup>) դիւան՝ կրօնական կամ խառն նիւթոց քննութեանը յատկացեալ.

բ. Գաստիարակութեան դիւան՝ կրթական կամ դըպրոցական խնդրոց քննութեանը յատկացեալ.

տ. Կալուածոց դիւան՝ վանքի, հիւանդանոցի, կը տակաց եւ որ եւ է կալուածական խնդրոց քըննութեանը յատկացեալ.

թ. Համարակալութեան դիւան՝ տարեկան պիւճէին,

(<sup>1</sup>) Competence.

հանգանակութեան , եւ որ եւ է ելմտական խընդրոց քննութեանը յատկացեալ .

Ե. Յարաբերութեանց դիսան՝ թաղական եւ դաւասական խնդրոց եւ աղերուազրոց քննութեանը յատկացեալ .

Չ. Երտաստութեան դիսան՝ հովական աթուոց վերաբերեալ եւ վարչական խնդրոց քննութեանը յատկացեալ .

Է. Նախաձեռնութեան(¹) դիսան՝ օրինական եւ կանոնական խնդրոց քննութեանը յատկացեալ .

Ը. Խմբապրութեան դիսան՝ օրինական եւ կանոնական ծրագրաց կամ յօդուածոց դրական վերաքընութեանը յատկացեալ :

Բաց ասոնցմէ՝ Ժողովը ըստ հարկին եւ առժամեայ կերպով յատուկ մասնաժողովներ կը կարգէ՝ սովորաբար 5 էն ցը 7 անդամէ . զորօրինակ՝ Վերաքննիչ յանձնաժողով՝ Սահմանադրութեան կամ կանոնադրութեան վերաքննութեանը համար . Դատաստանական յանձնաժողով՝ դատաստանի մը համար , եւլ . որոց ընտրութիւնը դիւանաց ընտրութեան պէս կ'ըլլայ , իոկ պաշտօննին իրենց տեղեկադրին հետ կը վախճանի :

**ՅՈՒ. 8 — Դիւանները ( ինչպէս անունը կը ցույնէ ) երեքական անդամէ կը բաղկանան , եւ անդամոց ընտրութիւնը՝ խրաքանչիւր դիւանի համար սրբագրելի ընդհանուր ցանկի մը վրայ կ'ըլլայ , զոր Ա. Դիւանը կը ներկայէ (²) Ժողովին , եւ Ժողովը՝ ցանկը սրբագրելով՝ մէկ դարձ քը-**

(¹) *Initiative.*—Տէս Գրքի Հանուր .

(²) *Présenter.*

ւէարկութեամբ կ'ընտրէ՝ զամենը համեմատական առաւելութեամբ միայն<sup>(1)</sup> (յօդ. 47 Շ.) :

Դիւանի մը անդամը՝ ուրիշ դիւանի մ'ալ եւ յանձնաժողովի մ'ալ անդամ իրնայ ըլլալ, բայ ի ժողովին Ատենապետէն :

Անձիւր դիւան ինք կը կարգէ իր ատենապետն ու ատենազպիրը, եւ խնդիրը քննելէն ետքը՝ կ'որոշէ պիւր տեղեկաբերը: Կու առն եւ իրենց ատենապետաց անուննն երը Ս. դիւանին որոյ Ատենապետը կը կարգայ ժողովին՝ դիւաններու ատենապետաց յանկը :

**ՅՕԴ. Ֆ.** — Դիւաններն իրենց աշխատութեանց կարգին մէջ ժողովին օրակարգին պէտք է հետեւին, եւ իրենց յանձնեալ քննութեան արդիւնը յաջորդ նիստին պէտք է հասցնեն ժողովին, մասնաւանդ երք ստիպօղութիւն կայ. եթէ չը կայ, միւս նիստին էն ուշ<sup>(2)</sup>:

**ՅՕԴ. ԱՊ** — Դիւան թէ յանձնաժողով տեղեկապետ մը եւ տեղեկաբերի մը միջնորդութեամբ կը ներկայեն ժողովին իրենց աշխատութեան արդիւ-

(1) Հըանանն. — Որքան դիւան կոյ այնքան հտառած կոյ մէկ ցանկի վրայ գծով զատված. իւրաքանչիւր հտաված երեք անուն կը պարունակէ: Աւամէկ օրինակ սյս ցանկէն բարականք կը ցըւեն երեսփոխանաց, որք տմեն մէկ հասկածը զատ զատ սրբագրելով և ընդհանուր ցանկը ծալելով բըւէտուփը կը ձգեն:

(2) Հըանանն. — Գործ ունեցող դիւանը՝ անդամոց միաբանութեամբ օր և տեղ որոշելով, կամ նիստէն 1, 2 ժամ առաջ ի ժողովարան միատեղելով կ'աշխատին:

նը, որ տեղեկադրին վերջը եղբակայութեամբ (<sup>1</sup>) կ'ամփոփի:

**ՅՕԴ. 11.** — Առաջարկութեան մը հեղինակը իշխանունք ունի ընթերակցելու (<sup>2</sup>) խորհրդակից ձայնով՝ զայն առաջարկութիւնը քննող դիւանին կամ յանձնաժողովին նիստերուն :

Եթէ քանի մը հեղինակներ են մի եւ նոյն առաջարկութեան, մէջերնէն մէկը կ'որոշեն զիրենք ներկայացնող (<sup>3</sup>) :

**ՅՕԴ. 12.** — Եթէ խնդրի մը վրայ տեղեկութիւն ըստանալու համար՝ հարկ ըլլայ, դիւաններն ուղղակի կը հաղորդակցին վարչութեան դիւաններուն հետ՝ իրենց առենապետին, առենապերին կամ տեղեկաբերին միջնորդութեամբ :

Նոյնակէս Բարձրաշնորհ Արքաղանդ՝ Ժողովային գործի մը համար ըստ հարկին՝ դիւաններէն մէկը կամ մէկ քանին՝ կամ առենապեանները միայն ի խորհրդակցութիւն կը հրաւիրէ իր քոլ :

**ՅՕԴ. 13.** — Դիւանաց առենապետները կրնան միանալ առժամապէս եւ առենապետաց դիւան կազմուլ՝ որ եւ Համագումար դիւան կ'ըսվի, աղղային խիստ կարեւոր կամ յարաբերական ծանր խնդրի մը նախաքննութեանը համար :

Ժողովը կ'որոշէ Համագումար դիւանի պէտքը, եւ Մ. Դիւանին Առենապետը՝ զանի կը դումարէ իր նախագահութեամբ :

Առենապետաց դիւանը պէտք է ըստ կանոնի՝

(<sup>1</sup>) Conclusion. (<sup>2</sup>) Assister. (<sup>3</sup>) Représenter.

Պատրիարքի ընտրութեան, ամբաստանութեան եւ  
հրաժարման խնդրոց նախաքննութեանը համար  
( տես յօդ. 47, 84, 87 ) :

Համագումար դիւանին վարմունքը նոյն է որպէս  
միւս դիւաններունը. ( տես վերոդրեալ յօդուածները ) :

### Դ. ԳԼՈՒԽ

Առենական կանոնը

ՅՕԴ. 14.— Աղքային ժողովը նիստ կ'ընէ՝ քա-  
նի որ ունի օրակարգ՝ սովորաբար երկու շաբաթն  
անդամ մը, ուրբաթ օր, Գալաթիոյ ժողովարանը.  
( տես բացառութիւնքը Յ եւ ԾԾ յօդուածոց մէջ ) :

Նախադան Սրբազնին կրնայ ըստ հարկին ար-  
տաքոյ կարգի ժողով զումարել ուրիշ օր մը կամ  
ուրիշ տեղ.՝ զորն որ յատուկ հրաւիրագրով կ'ի-  
մացնէ երեսվոխանաց :

Նախադան Սրբազնին կողմէն երեսվոխանը ի-  
ժողով կը հրաւիրվին դոնէ երկ օր առաջ, օրա-  
գրաց միջոցով կամ յատուկ հրաւիրագրով, յո-  
րում յիշեալ պէտք է ըլլայ նիստին տեղը, որոշեալ  
ժամը եւ օրակարգը :

ՅՕԴ. 15.— Առեանը կը բացվի ճիշդ որոշեալ  
ժամին, եւ նախընթաց առենագրութիւնն ընդու-  
նելութեան կը դրվի՝ ի ներկայութեան որ եւ է  
թիւի անդաբոց :

Դիտօղութիւն ունեցող բացակայ առենագրանք  
իրաւունք չ'ունին բողոքելու :

**ՅՕԴ. 16.** — Ատենապետը կը բանայ ևւ կը փառէ 'զատեանը :

Իր պաշտօնն է՝ վիճաբանութիւններն ուղղել ատենաբանից կարգով խօսք տալ, Կանոնադրութեան պահպանութեանը հսկել, ևւ ժողովն ըստ կանոնի զեկավարել :

Առաջին ատենապետին բացակայութեան ատեն՝ երկրորդին կը մնայ այս պաշտօնը, ևւ երկրորդին բացակայութեանը՝ երրորդին :

**ՅՕԴ. 17.** — Ատենադպրաց պաշտօնն է՝ իրարուօդնականութեամբ ատենական գրութեանց հոդ տանիլ, ևւ նիստի մ'ատենապրութիւնը ամփոփ ու հաւատարիմ խմբագրեալ՝ հետեւեալ նիստէն գոնէ 24 ժամ առաջ տպեալ հասցնել երեսիովանաց ամեն մէկուն : Այս հոգը զլիսաւորապէս առաջին ատենադպրին կը պատկանի, միւսներն իրենց յանձնված տօմարներով ըզբազեալ (յօդ. 6) :

**ՅՕԴ. 18.** — Եթէ զիազուածով ատենադրութիւնը չ'է կրցած ժամանակին ցրւիլ, ընթերցումը 'յատենի կ'ըլլայ, ևւ ատենապետ ու ատենադպիր կ'ըստորագրեն ընդունելութենէն ետքը : Տակեալներն ըստորագրեալ են՝ յաջորդ նիստին մէջ ընդունվելու համար :

Ատենադպրութիւնն ուրիշ բան չ'է քան նիստի մը մէջ անցածին ըստ կարի ճիշտ պատկերը : Դիտօղութիւն՝ անոր անձիչտ երեւցած կետերուն վրայ միայն կրնայ ըլլալ : Դիտօղութեան առթիւ՝ անցեալէն թել մը բռնելով անկէ նոր խնդիր հանելը՝ խնդրէն չեղիլ է ևւ աններելի (յօդ. 24, 25) :

Դիմովութեանց կը պատասխանէ խմբագիր ատենադպիրը, եթէ հարկ կայ պատասխանելու ։ բայց թէ բողոքօղ եւ թէ պատասխանօղ մէկ անդամ կը ման խօսիլ :

Ատենագրութեան ընդունելութիւնը ձեռամբարձով կ'ըլլայ :

**ՅՕԴ.** — Ատենագրութեան ընդունելութեանէն ետքը՝ օրակարգին չ'անցած՝ Ատենապետը կը հազորդէ Ժողովին անոր վերաբերեալ թուղթերը, եւ Ժողովը՝ Ատենապետին առաջարկութեանը վրայ յղումները կ'արտասանէ<sup>(1)</sup> :

Ժողովին մատուցեալ որ եւ է թուղթ՝ կամ նախագահին ուղղեալ կամ ուղղակի Ատենապետին՝ Մ. Դիւանին վրայ կ'աւանդվին (déposer) :

**ՅՕՐ.** — Ժողովէն ոչ ոք անդամ կրնայ խօսիլ՝ Ատենապետէն խօսք չը խնդրած ու չ'առած :

Ատենապետը՝ երբ իր անդամ խօսիլ ուղէ, դերատենապետին կը թողու աթոռը, ինք ալ իր կարգին խօսք կը խնդրէ ու բեմը կ'ելլի, եւ նոյն խնդրին համար ալ չը բազմիր ատենապետ :

**ՀԵտհանժ.** — Ժողովին արտասանած յղումները ուր ոք ըլլան՝ Ատենապետը կը հրամանէ (ordonnance) սուբուերով, զորօրինակ՝

« Ժողովն ու իշխանութեան (այս անուն) է հավետաշնութեան, (թէ և ան) նկատին Արքայութեան (սպառագութեան) ։ Ասման Արքայութեան ժողովն ու իշխանութեան է իշխանութեան, կամ՝ ան իշխանութեան իշխանութեան, կամ՝ վարչական իշխանութեան է իշխանութեան, (թէ և ան) և սպառագութեան ։ »

**Յօն. 21.** — Առենաբանը նշանակել պէտք է տան Դիւանին՝ անուշննին, ճառելու խնդիրնին, թեր կամ դէմ<sup>(1)</sup> խօսելիքնին :

Խօսից կարգի տօմարակալը՝ (կամ ուրիշ տոկունադպիր մը) կը նշանակէ խօսք խնդրօղները առաջնութեան (2) կարգով, թեր ու դէմ խօսօղաց շարքն որոշելով :

**Յօն. 22.** — Վիճաբանութեանց մէջ տոկունաբանը փոխադարձ կարգով կը խօսին թեր ու դէմ, այսինքն թեր խօսօղի մը ետեւէն չը գար անմիջապէս ուրիշ թեր խօսօղ մ'ալ, այլ դէմ խօսօղ մը կու դայ. նոյնակէս եւ աննալաստի (3) խօսօղի մը կը յաջորդէ խնդրին ի նպաստ (4) խօսօղ մը. եւ այսպէս փոխասաց յաջորդութեամբ կը շարունակէ վիճաբանութիւնը :

**Յօն. 23.** — Առենաբանը պէտք է բեմն ելլի ու անկէ խօսի, եթէ (անձնական տկարութեան մը պատճառով կամ խիստ կարծ բացառութեան մը համար) Առենապետը բացառութեամբ չը ներէ անոր իր տեղէն խօսելու :

Նախադահ Սրբազնը միայն իր աթոռէն կը խօսի, եւ երբ խնդրէ՝ խօսքն իրն է :

**Յօն. 24.** — Առենաբանը խնդրէն դուրս ելլելու չ'է. եթէ չեղի, Առենապետը՝ զանի ի խնդիր կը կոչէ :

Ո՛չ ոք կը կրնայ խօսք տանուլ այս ի խնդիր կոչման վրայ :

(1) Pour ou contre.. (2) Priorité. (3) En défaiteur. (4) En faveur.

**ՅՕԴ. 25.** — Երբոր ատենաքան մը երկու անդամի ի խնդիր կոչվի մի եւ նոյն ճառին մէջ, Ժողովը կրնայ՝ Ատենապետին առաջարկութեանը վրայ՝ արգիլել՝ զանի խօսքէ նոյն խնդրին վրայ նոյն նիստին մէջ: — Ժողովը կը յայտնէ՝ զիւր կամքը ձեռամբարձով, առանց վէճի:

**ՅՕԴ. 26.** — Նոյն խնդրին վրայ երկու անդամէն աւելի չը խօսվիր. եւ խնդրօղին Ատենապետը չը կրնայ ներել առանց Ժողովին հաճութեան:

**ՅՕԴ. 27.** — Խօսքը չը զլացվիր անձնական դէպի մը համար խօսիլ ուղօղէն (<sup>1</sup>), կամ կանոնադրական դիտօղութեան մը համար:

**ՅՕԴ. 28.** — Ո՞ր եւ է ընդմիջում, ո՞ր եւ է անձնականութիւն, բեմական բարբառի անվայել ո՞ր եւ է բառ կամ բացադանչութիւն արգիլեալ է եւ աններելի:

Արգիլեալ է նոյնպէս Տէրութեան աշխարհաբարութեան (<sup>2</sup>) վրայ քննադատական ակնարկութիւնը:

**ՅՕԴ. 29.** — Տասն անդամոց խնդրանօք՝ որ համառօտ պատճառաբանեալ պէտք է Ատենապետին ձեռքը տրիլի, ձեռամբարձով առանց վէճի Ժողովը կ'որոշէ միթէ դո՞նփակ նստել կ'ուղէ (յօդ. 81, 82):

(<sup>1</sup>) Չորօրինակ՝ խօսքի առաջնութեան համար, քըւէի սխալ մ'ուղղելու համար, անընդունելի բառի մը կամ թիւր մեկնված խմաստի մը սրբագրութեան համար, ևլ: Այն պարագայից մէջ՝ եթէ պատասխանելու տեղի կայ, որու որ անկ է անի միայն կը պատասխանէ, բայց թէ՛ բողոքող թէ՛ պատասխանող մէկ անդամ կրնան խօսիլ:

(<sup>2</sup>) *Politique.*

**Յօդ. Յ0.** — Ատեանք փակ յայտաբարելէն առաջ Ատեապեաը կը կարգադրէ՝ ժողովին խորհուրդն առնելով, ի ներկայութեան ո՞ր եւ է թիւի անդամոց, յաջորդ նիստին օրն ու օրակարգը, որ ատեապութեան մէջ կ'արձանագրիլ :

### Ե. ԳԼՈՒԽ

Քրէարկութիւն, և սրբածում:

**Յօդ. Յ1.** — Կախավճիռ միշտ կրնայ առաջարկվիլ (<sup>1</sup>), նոյնպէս եւ ձեռնհասութեան խնդիր :

**Յօդ. Յ2.** — Վիճաբանութիւնն աւարտեալ է բնականապէս երբ խօսից կարդն սպառի եւ ատենաբանք խօսած ըլլան քանիցս անդամ որ կանոնադրութիւնը կը ներէ : Սակայն եթէ վիճաբանու-

(<sup>1</sup>) Question préalable — Բեմական լեզուի մէջ Հայութիւնի կամաւուաբանութիւն կ'ըստի՛ խնդրի մը սրոշման տեղի անհնալ կոմը մանուանդ չ'ունենալը յայտնելը :

Հքանակութիւն: — Ժողովը ժամավաճառ չ'ընկըս համար նուխավճիռ կ'առաջարկվի, զորօրինակ՝ կրնական կամ քաղաքական խնդրոց մէջ ձեռնհասութեան համար, սահմանադրութեան սկզբան մը համար, արդէն սրոշեալ կետի մը համար (Յօդ. 74) և կամ երբ վիճելի կետը զլսաւոր խնդրի մը հետայն աստիճան կապակցութիւն ունի որ մէկը չը լուծվիր առանց միւսը յուղելու, և այն միւսը դալու է օր մը՝ անտլիք ատենին ժաղովն զբաղեցնելու վերջապէս երբ ո՞ր և ետնտեղութիւն մը կոյ կոր պէտք է բացաբարէ այդ վճիւն առաջարկօղը, որում խօսքը միշտ կը արվի . և թէր ու դէմ խօսողները լսելէն ետքը, խնդիր մը կրնայ առանց քննութենէ անցնելու՝ մերժվիլ կուր եւ ձգվիլ սոսկ նուխակարգ վճռով:

թեան ընթացքին մէջ շատ մը ձայներ քըւէ պահանջեն , Ատենապետը՝ մնացող ատենաբանից անունները յիշեցնելով՝ Ժողովին կամքը կը հարցնէ . Ժողովը կը պատասխանէ ձեռամբարձով , առանց վէճի :

**ՅօԴ. ՅՅ.** — Որոշման մասին՝ քըւէի եւ օրակարդի պահանջմունք նախադասութիւնն ունին զլսաւոր խնդրին վրայ , 'զորոյ վիճաբանութիւնը կրնան ընդհատել , այլ 'զատենաբանին խօսքը ոչ եթէ խօսած ատեն յառնին այդ պահանջմունք :

**ՅօԴ. ՅԱ.** — Վէճը փակեալ յայտարարելէն (<sup>1</sup>) առաջ Ատենապետը միշտ կը հարցնէ Ժողովին կարծիքը :

Եթէ փակման դէմ խօսք ուղղի , մէկ ատենաբանի միայն կը տրվի :

Եթէ տարակոյս կայ Ժողովին կարծեաց մէջ , երկրորդ փորձէն ետքը , վիճաբանութիւնը կը շարունակվի :

Փակումն արտասանվելէն ետքը՝ ալ խօսք չը տրվիր , միայն թէ խնդրին դրութեանը (<sup>2</sup>) վրայ :

**ՅօԴ. ՅՅ.** — Բարեփոխութիւնք (<sup>3</sup>) նախադասութիւնն ունին զլսաւոր խնդրին վրայ եւ անկէ առաջ քըւէի կը դրվին :

**ՅօԴ. ՅՅ.** — Օրինական կամ կամոնական ծրագիրը եւ առաջարկութիւնք յօդուած առ յօդուած քըւէի կը դրվին : Ամբողջին վրայ քըւէով կ'աւարտի միշտ որոշումը :

(<sup>1</sup>) Déclarer.

(<sup>2</sup>) Position. — Այսինքն ո՛ր բառերով էւել ո՛ւ Սահմանադրութեան առաջարկութիւնը կը դրվի :

(<sup>3</sup>) Amendement. (Տե՛ս Հերիէ Հանուլը .)

Ճղաւոր խնդիրներու մէջ բաժանումն իրաւունք է երբոր խնդըրվի :

**ՅՕԴ. ՅԵ.** — Ժողովը իր որոշման ենթարկեալ խնդրոց վրայ վճիռ կու տայ՝ ձեռամբարձով կամ նիստեւելով (<sup>1</sup>), յայտնի քըւէով, գաղտնի քըւէով :

**ՅՕԴ. ՅԵ.** — Ձեռամբարձով որոշումն իրաւունք է ամեն խնդրոց համար, բայ այն կետերէն՝ զոր ներկայ կանոնադրութեան 40, 41 և 43 յօդուածք կը նախատեսեն իրեւ բացառութիւն :

**ՅՕԴ. ՅԵ.** — Ձեռամբարձով որոշումը կը կատարվի՝ թեր ու դէմ կարծեաց կողմէն զատ զատ ձեռք վերցնելով ( փորձ ու հակափորձ ) (<sup>2</sup>), զոր դիւանին անդամք կը համբեն ու կը հաստատեն :

Եթէ հաստատեն թէ տարակոյս կայ, փորձը կը կրկնըվի (<sup>1</sup>) :

Ո՛չ ոք կրնայ խօսք առնուլ երկու փորձերու միջեւ, եւ ոչ իսկ երկրորդ փորձին ու քըւէարկութեան միջեւ :

**ՅՕԴ. ՅԵ.** — Յայտնի քըւէն իրաւունք է՝  
1. երկու տարեկուսելի փորձերէն ետքը,  
2. Օրինական ծրագիրներու կամ առաջարկութեանց համար :

**ՅՕԴ. ՅԵ.** — Յայտնի քըւէ կրնայ խնդըրվիլ ամեն նիւթի համար .

(<sup>1</sup>) Par assis et levé. — Կիստեւելթէ՛ ձեռամբարձ անկըտիր կրնայ գործածել Ատենապետը. բայց ընդհանրապէս՝ ձեռամբարձի առաջին տարեկուսելի փորձէն ետքը՝ ուր ձեռքերն համբելու գժարութիւն ծագած է, երկրորդ փորձը՝ նիստեւելով ընել աւելի որոշիչ համարված է :

(<sup>2</sup>) Epreuve et contre—épreuve.

Ե բաց առեալ են սա կետերը . օրակարգի որոշում, ատենագրութեանց ընդունելութիւն, ընտրութեանց լաւերացում, հրաժարմանց ընդունելութիւն, առաջնութիւն կամ նախաղառութիւն, յղում, օրաձգում, վիճաբանութեան փակում, եւ ստիպօղութեան նկատառում<sup>(1)</sup> :

**ՅՕԴ. 42.**— Յայտնի քըւէ կրնայ խնդըրվիլ թէ ձեռամբարձ որոշումէ առաջ եւ թէ առաջին տարակուսելի փորձէն ետքը :

Կրնայ նաեւ խնդըրվիլ ձեռամբարձ որոշումէն ետքը, եթէ օրինական ծրագրի կամ առաջարկութեան մը վրայ է տրվելիք վճիռը :

**ՅՕԴ. 43.**— Յայտնի քըւէ խնդրումը գրով պէտք է ըլլայ՝ դոնէ օ անդամէ ըստորագրեալ եւ Ատենապետին ձեռքը տրված :

Թէ ըստորագրօղաց եւ թէ թեր ու դէմ քըւէարկուաց անունները պէտք է ատենապրութեան մէջ անցնին, նոյնպէս եւ ձեռնպահից<sup>(2)</sup> եւ բացակայից անունները :

**ՅՕԴ. 44.**— Յայտնի քըւէարկութիւնը կը կատարվի սա հետեւեալ կերպով.

Ատենապետը կը հրաւիրէ երեսփոխանները որտեղերնին նստին : Անձիւը երեսփոխան երկու քըւէթուղթ ունի որոց վրայ իր անունը տպեալ է : Սպիտակագոյն քըւէթուղթները ընդունելութիւն կը նշանակեն, կապուտագոյն քըւէթուղթները չընդունելութիւն : Բարապանք կը ներկայեն ան-

(1) *Prise en considération.*

(2) *Abstentioniste.—S'abstenir.—Տե՛ս Հերքելու ժամանակը :*

Ճիւր երեսփոխանի՝ 'զոր անուանէ կը կոչէ ներկայութեան տօմարակալ ատենադպիրը՝ քըւէտուփմը որոյ մէջ կը ճգէ իր քըւէթուղթը :

Անուանց ցանկն սպառելէն ետքը անմիջապէս կրկին կը կոչէ ատենադպիրն այն անունները որք քըւէ չ'են տուած : Անուանական կոչման չը պատասխանողը բացակայ կը նշանակվի, յայտնած պատճառովը, եթէ ունի ( տե՛ս յօդ. 106 ) :

Երբոր քըւէթուղթները հաւքված են, Ատենապետը փակեալ կը յայտարարէ ըդքըւէարկութիւնը : Քըւէտուփներն անմիջապէս բեմին վրայ կը բերվին : Ատենադպիրք քըւէհամարը կ'ընեն, եւ Ատենապետը կը հոչակէ 'զարդիւնը . այսինքն՝ քանի քըւէի վրայ, քանի քըւէի դէմ, քանի քըւէով ընդունվիլ կամ չընդունվիլ :

Եթէ հինգ անգամ խնդրեն թէ քըւէարկութիւնը բեմին վրայ ըլլայ, Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով՝ առանց վէճի :

**ՅՕԴ. 45.**— Այն ամեն պարագայից մէջ ուր յայտնի քըւէ կրնայ կամ պարտ է ընդունվիլ, եթէ տաս անգամ գաղտնի քըւէ խնդրեն, պէտք է որ դադանի ըլլայ :

Գաղտնի քըւէն ալ յայտնի քըւէին պէս կը խընդըրվի ( տե՛ս յօդ. 43 ) :

Խնդրանքն ըստորագրօղաց անունները ատենադրութեան մէջ կ'անցնին, նոյնպէս եւ ձեռնպահից ու բացակայից անունքը :

**ՅՕԴ. 46.**— Գաղտնի քըւէարկութիւնը կը կատարվի սա հետեւեալ կերպով :

Անձիւր երեսիոխան կ'առնէ երկու գնտակ, մէկը ճերմակ՝ որ ընդունելութիւն կամ այս՝ կը նըշանակէ . միւսը սեւ՝ որ չընդունելութիւն կամ ո՛չ կը նշանակէ : Անուանական կոչման կարգով անձիւր ոք կը ներկայանայ, բեմին վրայ դրված սափորի մը մէջ կը ճգէ իր քըւէն նշանակօղ գնտակը . իսկ միւս դնոտակը որ նշանակութիւն չ'ունի կը տանի կը ճգէ ուրիշ սափորի մը մէջ որ ատենադպրաց դիւանին վրայ դրված է :

Քըւէնին տալէն ետքը՝ ամեն մարդ կ'անցնի իր տեղը կը նստի :

Ատենադպիրք կողովի մը մէջ կը պարպեն բեմին վրայի սափորը . ամենուն ցուցնելու կերպով կը համրեն գնտակները, եւ ճերմակները սեւերէն կը զատեն (<sup>1</sup>) :

Գոնէ երկու ատենադպիր կը հաստատեն այս համբանքին արդիւնը, զոր Ատենապետը կը հոչակէ :

ՅՕԴ. 43.— Ժողովին մէջ ընտրութիւնք գաղտնի քըւէով կ'ըլլան, եւ քըւէհամարը չորս քննիչներու ձեռօք կը կատարվի որոնք վիճակով կը հանվին :

Ա. Միանուն է քըւէն՝ երբոր մէկ քըւէով մէկ անուն կ'ուղվի ընտրել, եւ քըւէթուղթը մէկ անուն պարունակելու է :

(1) Հըտհանք.— Գնտակի պակսութեան ատեն, առհամրկի մարթէնակ թուղթի կտորներով կատարելոյս գործօղութիւնը, անձիւր անդամ՝ դրացւոյն չը ցուցնելու ըդդուշութեամբ և ընթեռնըլի կերպով իր այսն կամ ո՛վ թուղթի կտորի մը վրայ դրելով: Այն ատեն երկու սափորի ալհարկ չը կ'այ :

Բազմանուն է քըւէն՝ երբոր մէկ քըւէով մէկէն աւելի անուն կ'ուղվի ընտրել, եւ քըւէթուղթը այնքան անուն պարունակելու է որքան որ կ'ուղվի ընտրել :

Բազմանուն քըւէթուղթները՝ եթէ ուղված թիւէն աւելի անուն պարունակեն՝ ընդունելի են. բայց միայն՝ առջիններէն ուղված թիւը կ'առովի; ետքի աւելորդը չը համրըվիր :

Ե. Ժողովին մէջ ընսրութիւնները՝ Ս. Դիւանին անդամներէն զատ որ անցանկ կ'ընտըրովին թէ միանուն եւ թէ բազմանուն քըւէով (յօդ. 6), ներկայիալ ցանկի մը վրայ կ'ըլլան, որ կամ զեղչելի է կամ սրբագրելի :

Գ. Սրբագրելի ցանկը՝ այնքան անուն կը պարունակէ որքան որ ընտրել կ'ուղվի, որոյ մէջ քըւէարկուք չ'ուղած անուննին կ'աւրեն տեղը ուղածնին կը զրեն :

Մէկ դարձ քըւէարկութեամբ համեմատական առաւելութիւնը միայն կը բաւէ :

Դ. Զեղչելի ցանկը՝ եթէ մէկ անուն ընտրել կ'ուղվի մէջէն՝ գոնէ եռապատիկ անուն պարունակելու է. եթէ մէկէն աւելի կ'ուղվի, ցանկը երկապատիկ անուամբ կը բաւէ. Քըւէարկուք կը զեղչեն այս ցանկէն աւրելով չ'ուղած անուննին բայց տեղը անուն չեն կրնան դնել :

Երկու դարձ քըւէարկութենէ ետքը՝ համեմատական առաւելութիւնը կը բաւէ :

Ղ. Դիւանաց եւ յանձնաժողովոց ընսրութիւնը սրբագրելի ցանկի վրայ կ'ըլլայ 'զոր Ս. Դիւանը կը ներկայէ եւ ժողովը կը սրբագրէ :

Է. Վարչութեան անդամոց ընտրութիւնը զեղչելի ցանկի վրայ կ'ըլլայ՝ զոր Պատրիարքը կը ներկայէ՝ իր առանձին նախաձեռնութեամբն ու ընդհանուր պատասխանառութեանը տակ, եւ ժողովը կը զեղչէ :

Է. Պատրիարքի ընտրութիւնը բացարձակ առաւելութեամբ կ'ըլլայ՝ հնգանուն զեղչելի ցանկի վրայ, զոր Վարչութեան Խառն Խորհուրդը կը ներկայէ՝ ընտրելեաց անցեալն ու արժանիքը պատճառաբանօղ համառօտ տեղեկազրով մը, զոր առենապետաց դիւանը կը նախաքննէ (13) :

Այս դիւանն իր դիտօղութեամբ կ'եղրակայէ իր կարծիքը՝ կամ անսրբագիր ընդունելութեան ցանկին, կամ սոսկ վոփոխութեամբ արժանեաց կարգին եւ կամ սրբազրութեան զոր կ'առաջարկէ : Ժողովը այդ առաջարկեալ վոփոխութիւն կամ սրբագրութիւնը կ'ընդունի կամ կը մերժէ ձեռամբարձով առանց վէճի, եւ յետոյ ըստ այնմ կը զեղչէ ցանկն իր քըւէով :

Քըւէից հաւսարութիւն պատահած առեն՝ երիցագոյնն ընտրեալ է, եթէ վիճակ չը պահանջվի գոնէ երկրորդօղ ձայնով. Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ վիճակը կ'ընդունի :

Սոյն ճամբէն կ'անցնի եւ կաթողիկոսական ընտրելեաց ցանկը՝ Գաւառական ժողովներէն կամ Եկեղեցական ժողովն ելած, եւ սոյն օրինակ կը մասնակցի Աղգային ժողովը այդ ընտրութեան :

**ՅՕԴ. 48 —** Քըւէի մասնակցողաց բացարձակ առաւելութեամբը կը դոյանայ ժողովին որոշումը : Բարձրաշնորհ նախագահը քըւէի մասնակցելու

պարտաւորեալ չ'է , եւ անուանական կոչում չ'ըլւար իրեն համար :

Ամեն քըւէարկութեանց վերջը՝ փակեալ յայտաբարելին առաջ՝ Ատենապետը Ժողովին կողմէն կը հարցնէ Բ. Սրբաղանին միթէ ունի քըւէ : Խակերբոր քըւէհամարի արդիւնքը թեր ու դէմ քըւէից հաւսարութիւն բերէ , եթէ նախագահ Սրբանը քըւէ տուած է , այն քըւէին կողմը կը հակի որոշումը . եթէ չ'է տուած , յայնժամ Ատենապետը յ'անուն Ժողովին կը խնդրէ Նորին Սրբաղնութեան քըւէն որ կ'որոշէ 'զորոշումը :

**ՅՕԴ. 49.**— Ժողովին որոշմանց վաւերականութեանը համար՝ երեսփոխանաց մեծամասնութեան ներկայութիւնը հարկաւոր է , կամ պակասութեան ատեն՝ անոր որոշօղ ձայնից միաբանութիւնը :

Երկու աստիճան մեծամասնութիւն կ'ընդունվի , օքնական եւ իսկական :

Օրինական մեծամասնութիւնն է՝ ամբողջ երեսփոխանութեան Սահմանադրութեամբ որոշված թիւն (<sup>(1)</sup>) կէսէն մէկ աւելին (որ այսօր 71 է) :

Խակական մեծամասնութիւնն է՝ անոր հաւանական թիւին կէսէն մէկ աւելին (որ այսօր 47 է) : Եւ հաւանական թիւ կը նկատվի ամբողջ երեսփոխանութեան երկու երրորդը (<sup>(2)</sup>) :

(<sup>1</sup>) Ծանօթ.— Երեսփոխանաց այս ամբողջ թիւը գրեթէ երբէք և բնականապէս կարելի չ'է ձեռք բերել , պատճառք՝ ընտրութեանց կամ վաւերացմանց յապաղմունք , ճամբորդութիւնք , չիւանդութիւնք , հրաժարմունք , վախճանմունք ել :

(<sup>2</sup>) Միւս մէկ երրորդը գըեթէ միշտ լացակայ կամ ան-

Այս երկու աստիճանն մեծամասնութիւնը իրենց որոշող մասը կամ ձայնն ունին, որ իւրաքանչիւրին համար իր բացարձակ առաւելութիւնն է . 71 ին որոշող ձայնն է 36 . եւ 47 ին որոշող ձայնն է 24 :

Զանդամոց ներկայութիւնը դիւանը կը հաստատէ ներկայութեան տօմարէն ՝զոր երեսփոխանք կ'ըստորագրեն ժողովարան մտած ատեննին . եւ քըւէարկութեան ատեն դարձեալ կ'ըստուկէ միթէ ստորագրողը իսկապէս ներկայ են եւ թէ նիստը լիովին բաւական է որոշման ձեռնարկելու : Եթէ նիստը լիովին բաւական չը դտվի, ներկայ անդամք կ'որոշեն ձեռամբարձով առանց վէճի միթէ կ'ուղեն որոշող ձայնից միաբանութիւնը՝ հաւանական կարծելով փորձել, կամ թէ իսկոյն անբաւական յայտարարել ժողովը :

**ՅՕՒ. ՖՊ.** — Օրինական մեծամասնութեան ներկայութիւն կը բնտուվի, կամ անոր որոշող ձայնից միաբանութիւն՝

1° Պատրիարքական ընտրութեան համար .

2° Պատրիարքական ամբաստանութեան դատական նիստին համար .

3° Սահմանադրական օրինաց վերջնական որոշման համար :

Եթէ առաջին նիստի մը մէջ չը դոյանաց օրինական մեծամասնութիւն, բայց որոշող ձայները

պատրաստ համարելի է վերոյելեալ պատճառոք :

—Այս թիւերն ըստ հարկին կ'աւելնան կամ կը պակսին համեմատապէս, եթէ երեսփոխանաց օրինական թիւն աւելնաց կամ պակսի սահմանադրապէս :

միանան մէկ կողմ , որոշումը վաւերական է : Խսկ եթէ այդ ձայները չը միանան , նիստն անբաւական կը համարվի , եւ որոշումն իրեւ չ'եղեալ՝ յաջորդ նիստին կը մնայ , ուր խսկական մեծամասնութիւնը կը բաւէ կամ անոր որոշօդ ձայնից միաբանութիւնը :

**ՅՈԴ. 51.**— Խսկական մեծամասնութեան ներկայութիւն կը բնարովի , կամ անոր որոշօդ ձայնից միաբանութիւն՝

1° Այն լնդրոց համար որոնց համար օրինական մեծամասնութիւնն անդամ մը անբաւական դըպաված է (յօդ. 50) :

2° Ամեն ընտրութեանց , եւ այն ամեն աղղային լնդրոց համար որք վիճաբանութեամբ լուծելի են :

Ե բայ առեալ են ատեանին սկիզբն ըլլալու ատենագրութեան ընդունելութիւնը եւ ատեանին վերջերն ըլլալու յաջորդ նիստի օրակարգին որոշումը (տես յօդ. 1օ, 50) նոյնպէս ի բաց առեալ են այն ամսլէճ լնդիրներն ու կետերը որք ձեռամբարձով առանց վէճի որոշելի են , որոնք ներկայ կանոնագրութեան յօդուածոց մէջ իրենց տեղը յիշված են , կամ 41 յօդուածին մէջ իրեւ բացառութիւն նշանակված : Այս լնդիրները՝ որք ուղղակի աղղային չ'են այլ սոսկ ատենական դործողութիւնք , կը ան որոշվիլ ի ներկայութեան որ եւ է թիւի անդամոց :

Եթէ առաջին նիստի մը մէջ չը գոյանայ խոկական մեծամասնութիւն , բայց որոշօդ ձայները միաբանին , որոշումը վաւերական է : Խսկ եթէ չը միա-

բանին, նիստն անբաւական կը համարվի, եւ փորձեալ որոշումն՝ իրեւ չ'եզեալ՝ յաջորդ նիստին կը մնայ, ուր սոսկ որոշօղ մասին ներկայութիւնը միայն կը բաւէ. զի բացակայք ձեռնապահից կարգը կը սեպավին, չ'ունին իրաւունք բողոքելու. եւ իրաւունքնին ներկայից թողլով ասոնց իրաւունքը բարդեալ կը նկատվի:

Յօդ. 52—. Սոսկ որոշօղ մասին ներկայութեամբ նատեալ ատեանի մէջ՝ ոչ օրակարգէն դուրս խնդիր ներելի է որոշել եւ ոչ իսկ վիճաբանութիւնը փակել անկէ դուրս խնդրի մը վրայ, եթէ յուղվի:

Եթէ իսկական մեծամասնութեան որոշօղ մասին ներկայութիւնը չը գոյանայ, որոշումն անկարելի է զի վաւերականութեան հիմ չը մնար, եւ նիստը՝ իրեւ բոլորովին անբաւական՝ կը վերնայ:

Եթէ մէկ ատենական շրջանի մէջ երկու անդամ տեղի ունենայ այս անցուսալի դէպը, անմիջապէս նախագահ Արքազանը յատուկ կոչնազրով ի պարագանութիւն կը կոչէ բոլոր երեսփոխանները՝ յիշեցնելով իրենց կանոնադրութեան վերջին յօդուածը, որ կը գծէ նախագահին ընելիքը, եւ որ ամենայն իրաւամբ դործադրելի է, եթէ յաջորդ նիստին մէջ անձամբ չը պատասխանվի սոյն կոչնազրին (lettre d'appel ou de convocation):

Յօդ. 53 — Ամեն անբաւական նիստի հետեւ եալ նիստը ութօքէն դումարել՝ իրաւունք է եւ պարտիք :

## Զ. ԳԼՈՒԽ

Խնդրոց կարգ, Օրակարգ, և Ստիպօղոթիւն :

**ՅՕԴ. 54.** — Ժողովին բացումէն սկսեալ՝ վիճաբանելի խնդրոց կարգը բնականապէս կու գայ եւ իրեն յատկացեալ տօմարին մէջ կ'արձանագրվի :

Երեսփոխանական տարեկան ընտրութեանց վաւերացումն ու մայր դիւանին կազմութիւնը՝ ժողովին առաջին նիստին աշխատանքն են (յօդ. 1) :

Դիւանաց կազմութիւնն ու Վարչութեան տարեկան համարատութիւնը՝ երկրորդ նիստին խնդիրներն են (յօդ. 1) :

Ասկէ ետքը կու գայ Նախադահական ճառով յատկապէս յանձնարարեալ խնդիրները, որք Վարչութեան կողմէն իրեւ օրինաց ծրագիր կամ առաջարկութիւն կը ներկայիշին եւ 'զորս Ատենապետը՝ առաջնութեան կարգով՝ խնդրոց տօմարին մէջ արձանագրել կ'արտօնէ<sup>(1)</sup> 'զաւ ենադպիրը, ժողովին հաւանութեամբ<sup>(2)</sup> :

Ոչ ոք կրնայ խնդրոց տօմարին մէջ խնդիր յաւելու կամ պակսեցնել առանց ժողովին հաւանութեամբ :

(1) Autoriser.

(2) Հըանանեֆ. — Խնդրոց կարգի արձանագիրը տօմարը կանոնաւոր բռնված ըլլալու համար, ամէն մէկ խնդրի էջ մը տալու է և վերէն ի վար տօմարաձեւ նշանակելու է՝ սահմանադրութու (dépot), սահմանադրութու (renvoi), սահմանադրութու (urgence), սահմանադրութու (prise en considération), դրանք (rejet), որոշում (ajournement), դրանք (délibération) ընդունելունեամբ {այս չենդունելունեամբ}. Հըանանանեամբ (ordonnancement), և ոյս ամեն մէկ ատենական գործողութիւն՝ տեղի ունեցած օրէն թվականեալ (daté) :

Ատենապետը խնդրոց աօմարին հետեւելով կը կարգադրէ յաջորդ նիստին օրակարգը (յօդ. 50) որ մէկ նիստի մէջ վիճաբանելի կամ կարգը այն օրվան եկած խնդիր ըսել է, որ եւ կ'ըսվի պարզ ու անխառն օրակարգ :

ՅՕԴ. 55.— Ո՛չ մէկ խնդիր կրնայ խառնվիլ պարզ օրակարգին մէջ, եթէ ըստիպօղութիւնը նկատողութեան չ'առնու եւ չ'ընդունի ժողովը :

Ո՛չ մէկ օրակարգ կրնայ առաջարկվիլ եթէ պատճառաբանեալ (<sup>1</sup>) չ'ըլլայ, խմբագրեալ եւ դիւանին աւանդեալ՝ զոր Ատենապետը կ'ընթեռնու ժողովին :

Պարզ ու անխառն օրակարգը՝ եթէ պահանջվի՝ առաջնութիւն ունի միշտ :

ՅՕԴ. 56.— Եթէ պարզ ու անխառն օրակարգն ի բաց առվի, ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի՝ միթէ կ'ուզէ նկատօղութեան առնուլ եւ դիւաններուն յղել (<sup>2</sup>) պատճառաբանեալ օրակարգին քննութիւնը :

Եթէ դիւաններու յղումն որոշվի, տեղ կը ցուցվի խնդրոց կարգին մէջ, եւ ժողովը նախաքննիչ դիւանին տեղեկագրին վրայ այնպէս կը վարվի որպէս կանոն է վարվիլ ստիպօղական նիւթերու մէջ ( տես յետագայ յօդուածները ) :

ՅՕԴ. 57.— Օրինական խնդրոց կամ առաջարկութեան մը ներկայման ատեն՝ ստիպօղութիւն կրնայ խնդըրվիլ :

Կրնայ խնդըրվիլ Վարչութեան կողմէն, հեղինակին կողմէն, որ եւ է երեսփախանի կողմէն :

(<sup>1</sup>) Motivé. (<sup>2</sup>) Renvoyer.

**ՅՕԴ. 58.** — Ստիպօղութիւն յայտարարել տալու խնդրանքը պատճառաբանեալ պէտք է ըլլայ : Ժողովը անվէճ կ'որոշէ՝ Ատենապետին հարցման վրայ՝ եթէ տեղի կայ ելք տալու (<sup>5</sup>) ստիպօղութեան խնդրանքին :

**ՅՕԴ. 59.** — Եթէ ստիպօղութիւնն յայտարարվի, Ժողովին հարցվելէն ետքը դիւաններուն կը յգիլի (յօդ. 9), եւ ըստ այսմ վիճաբանութեան օրը կ'որոշվի :

Նախաքննիչ դիւանին տեղեկագրին վրայ՝ Ժողովը անմիջապէս վիճաբանութիւնը կը բանայ եւ պարզ ձեւով (այսինքն միակ քըւէարկութեամբ) կը տրնօրինէ որոշումը :

Եթէ ստիպօղութիւնը չ'ընդունվի, օրինական խնդրոց համար (տե՛ս 66 յօդ, եւ պարզ խնդրոց համար՝ 62 եւ 64 յօդուածները) :

**ՅՕԴ. 60.** — Օրինական խնդրի մը կամ առաջարկութեան մը ստիպօղական ընութիւնը կրնայ ետ առվիլ՝ երեսփոխանի մը խնդրանքին վրայ՝ նախաքննիչ դիւանին տեղեկագրին աւանդումէն ետքը : Այս ետ առումը ալ չը կրնար խնդրվիլ վիճաբանութեանց բացումէն ետքը :

### Է. ԳԼՈՒԽ

#### Առաջարկութիւնք

**ՅՕԴ. 61.** — Երեսփոխանի մ'ըրած որ եւ է առաջարկութիւն՝ օրինական թէ պարզ՝ գրաւոր պէտք

(<sup>5</sup>) *Donner suite.*

Ե ըլլայ : Ատենապետին կը արվի որ Ժողովին հազորդելէն ետքը՝ նոյն խնդրին ձեռնհաս դիւանին նախաքննութեանը կը յանձնէ ( յօդ . 9 եւ 10 ) :

Այս դիւանը հակիրճ տեղեկագիր մը կը բերէ , որոյ եղրակայութիւնն է կամ պարզապէս մերժում , կամ օրածում , կամ նկատառում :

Սակայն , եթէ գիտնայ այս դիւանը թէ ուրիշ դիւան մը արդէն այնպիսի խնդրով մ'զբաղեալ է որ կապակցութիւն ունի այդ առաջարկութեան հետ , անդէն ու բերանացի կը խնդրէ Ժողովին որ այն դիւանին յղվի առաջարկութիւնը :

**ՅՕԴ. 62.** — Եթէ ձեռնհաս դիւանը պարզապէս մերժման կամ օրածման եղրակայէ , Ժողովը կ'անցնի իր օրակարդին : Եթէ նկատառման եղրակայէ , նախ զասի կ'որոշէ Ժողովը : Եթէ նկատառումն ընդունի , կ'անցուցնէ զանի խնդրոց տօմարին մէջ ուր կ'ըսպասէ իր օրակարդը . եւ ելք կու տայ առաջարկութեան՝ պարզ որոշման եղանակաւ , եթէ պարզ է առաջարկութիւնը :

**ՅՕԴ. 63.** — Առաջարկութեան մը հեղինակը՝ երբ վէճն անգամ բացված ըլլայ , կրնայ զանի միշտ ետ առնուլ : Բայց եթէ ուրիշ երեսփոխան մը զանի բռնէ , վէճաբանութիւնը կը շարունակվի :

**ՅՕԴ. 64.** — Ժողովին մերժեալ կամ օրածեալ առաջարկութիւնը չեն կրնար մէյ մ'ալ ներկայանալ երեք նիստէ առաջ եթէ նկատողութեան առված են . վեց նիստէ առաջ՝ եթէ առաջին որոշմամբ մերժեալ են :

**ՅՕԴ. 65.** — Վարչութեան կողմէն ներկայեալ օրինական ծրագիր կամ առաջարկութիւն՝ անդամոց մէկուն ձեռօք Մ. Դիւանին վրայ կ'աւանդվի յետ ընթերցման, եթէ ընթերցում ըլլայ:

Այս ծրագիրները պատճառաբանեալ են, եւ եթէ կարելի է՝ տպեալ եւ երեսփոխանաց ցրւեալ, որպէս են նաև յատուկ յանձնաժողովէ մը աւանդեալ սահմանադրական կամ կանոնադրական ծրագիրք կամ յօդուածք:

Ատենապետը՝ սոյն խնդրոց յատկացեալ՝ բեմական նախաձեռնութեան դիւանին կը յղէ՝ զօրինական ծրագիրը կամ առաջարկութիւնը, խնդիրն ուսումնասիրելու<sup>(1)</sup> եւ նախապատրաստական քննութիւնն ընելու համար (յօդ. 9 եւ 10):

Նախաձեռնութեան դիւանին տեղեկագիրը Մ. Դիւանին վրայ կ'աւանդվի՝ յետ ընթերցման, եթէ ընթերցում ըլլայ: Ատենապետը կ'առաջարկէ եւ ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը:

**ՅՕԴ. 66.** — Ո՛չ մէկ ծրագիր օրինաց՝ բաց ըստիպող դէպերէ՝ չը դրվիր վերջնական քըւէի, եթէ երեք որոշումէ չ'անցնի՝ իրարմէ գոնէ մէկ շաբաթ միջոցով:

Առաջին որոշումը յատկապէս ծրագրին ընդհանութեանը վրայ կ'ըլլայ: Ժողովին կը հարցվի միթէ կ'ուզէ երկրորդ որոշման անցնիլ:

Երկրորդ որոշումը կ'ըլլայ ամեն մէկ յօդուածքըէի դնելով, նաև անոնց վերաբերեալ բարեփոխութիւնները, եթէ կան: Ժողովը կ'որոշէ միթէ կ'ուզէ երրորդ որոշման անցնիլ:

(1) Etudier.

Երրորդ որոշումին ետքը՝ որ ծրագրին բովանդակութեանը եւ մասնաւոր տրամադրութեանց վրայ կ'ըլլայ, վերջնական քըւէի կը ձեռնարկվի, որն որ կը կնքէ 'զորոշումը :

Ֆողովը կրնայ՝ այս վերջնական քըւէին առաջ՝ Խմբագրութեան դիւանին յղել ծրագիրը, որպէս զի գլխոց եւ յօդուածոց դասակարդութեանը նայի եւ օրէնսդրական ոճին ու յատկաբանութեանց ուշադրութեամբ վերաքննութիւնն ընէ : Այս յըղումն իրաւունք է եթէ ձեռնհաս դիւանը խնդրէ :

Գրական վերաքննութենէն ետքը մէյ մ'ալ կը կարդացվի ֆողովին, եւ բացված վիճաբանութիւնը միմիայն խմբագրութեան վրայ կրնայ ըլլալ :

**Յ0Դ. 67.**— Բարեփոխութիւնը խմբագրեալ կը տրվին Առենապետին :

Ֆողովը քըւէ չը տար ոչ մէկ բարեփոխութեան վրայ եթէ՝ բացատրվելէն ետքը՝ չ'ունենայ երկրորդօղ մը :

**Յ0Դ. 68.**— Երկրորդ որոշման միջոցին առաջարկված բարեփոխութիւնը՝ նախաքննիչ դիւանին կամ մասնաժողովին յղել իրաւունք է եթէ տեղեկաբերը խնդրէ :

Երկրորդ որոշման փակումին ետքը ներկայեալ նոր բարեփոխութիւն կամ յաւելուածական յօդուած՝ Երրորդ որոշման բացումին առաջ հաղորդված պէտք է ըլլայ նախաքննիչ դիւանին կամ մասնաժողովին :

**Յ0Դ. 69.**— Եռեակ քըւէարկութեամբ բարդ որոշման տնօրէնութիւնը պիւճէի խնդրոց եւ տես-

ղական օրինաց համար չ'է . ասոնք միակ քըւէ-  
արկութեամբ եւ պարզ որոշման եղանակաւ կը  
տնօրինվին : Այլ սահմանադրական այն կետերուն  
համար է որ ընդհանուր աղդին մէջ իբրեւ օրէնք  
սկիտ՝ իշխեն . ինչպէս ընտրական օրէնք , դաստիա-  
րակութեան օրէնք , հանգանակութեան օրէնք .  
իրաւանց ու պարտեաց արդար սկզբունքն ըըխ-  
եալ այն տրամադրութիւնք՝ որ վարչութեանց ըն-  
թանալու շաւիղը կը դժեն եւ անհատից յարդն ու  
պատկառանքը կը պահանջեն , բայց չ'ունին օրի-  
նաց ոյժ եթէ աղդային ժողովին քըւէէն չ'անցնին :

**ՅՕԴ. ՇՊ.** — Այն օրինաց համար՝ որք ըստիպօ-  
ղութեան պատճառով պարզ որոշման եղանակին  
ենթարկեալ են (յօդ. 59) , Բարձրաշնորհը՝ իբ-  
րեւ գործադիր իշխանութեան . Պետ՝ իրաւունք  
ունի երկրորդ որոշում մ'ալ խնդրելու 'զոր  
պատճառաբանեալ դիտօղութեամբ կը յայտնէ  
ժողովին :

**ՅՕԴ. ՇԱ.** — Եթէ երեք որոշմանց մէկուն մէջ  
մերժվի օրինական ծրագիր մը , երեք նիստէ ա-  
ռաջ չը կրնայ դարձեալ երեւիլ ժողովին օրակար-  
գին մէջ :

**ՅՕԴ. ՇԶ.** — Ժողովին որոշմանց արդիւնքը Ատե-  
նակետը կը հոչակէ սա բառերով

« Աղբային Ժաղովն ընդունեց » ,

կամ « Աղբային Ժաղովը Նընդունեց » :

**ՅՕԴ. ՇՅ.** — Աղդային ժողովին վերջնական վճի-  
ռը՝ օրինաց ոյժ ունի , եւ նոյն ժամէն դործադրելի է :

Ատենապետը՝ ժողովին կամքն առնելէն ետքը՝ յանուն ժողովին ըստորագրելով օրէնսդրապէս կը հրամանէ վճռագիրը, նիստին օրէն թըւականեալ, զոր եւ երկու ատենապետիր կ'ըստորագրեն ( խնդրոց կարգի տօմարտկալ, եւ ընդհանուր ատենապետիր ) :

Վճռագիրը Ատենապետին ձեռօք Բարձրաշնորհ Սրբազնին կը տրվի, որ ինքն ալ նախագահական բարձր հրամանամբ դործադրութիւնը կ'ապահովէ : Օրինակը Պատրիարքարանի դիւանին մէջ արձանագրվելով օրինաց գիրքին մէջ, վճռագիրը կը պահվի աղքային ժողովին թանդարանին մէջ :

**ՅՈՒ. ՇԱ.** — Եթէ հաստատված օրինաց մէջ սահմանադրական այնպիսի կետեր կան որ Բ. Դրան վաւերացմանը կը կարօտին, այնպիսեաց համար՝ Բարձրաշնորհ Սրբազնը՝ կամ սպատասխանատութիւնը յանձն կ'առնու իբրեւ միջնորդ յարաքերութեանց Աղդին եւ Տէրութեան, եւ դործադրութիւնը՝ կը հրամանէ պատրիարքական իշխանութեամբ, սպասելով՝ զայդ վաւերացումը . կամ բացառութիւն կը խնդրէ, վութացնել խօստանալով՝ զայդ վաւերացումը :

Ո՞րն եւ ըլլայ իր որոշումը՝ Բարձրաշնորհը կը յայսնէ՝ զանի ժողովին գոնէ յաջորդ նիստին մէջ :

**ՅՈՒ. ՇՅ.** — Ժողովը իր որոշումէն չը կընայ դառնալ կամ՝ զանի փոփոխել (<sup>1</sup>), եթէ որոշեալ խնդրին հեղինակին կողմէն, Վարչութեան կամ Պատրիարքին կողմէն՝ դործադրութեան անտեղութիւն պատճառելով ստիպութիւն չը խնդրվի,

(<sup>1</sup>) *Modiflier.*

որոշումէն դոնէ երեք ամիս ետքը . ( անս ստիպօղութեան յօդուածները ) :

Եթէ ստիպօղութիւնը մերժվի , արդէն որոշեալ խնդիրը մէջ մ'ալ չը կրնար ներկայմիլ նոյն ատենական շրջանին մէջ :

### Բ. ԳԼՈՒԽ

Յեմական յարաբերութիւնք ժողովին.

**ՅՕԴ. ՇՅ.**— Ժողովին ուղակի եւ ներքին յարաբերութիւնքը խւր Գործադիր իշխանութեան եւ իւր Վարչութեան հետ են , որոյ անդամք՝ իրենց վերապահեալ նստարանին վրայ բազմած՝ ժողովին մէջ ձայն ունին , բայց ոչ քըւէ եթէ երեսփոխան չ'են : — Նոյնպէս եւ իրենց համարատութեան խնդրին մէջ ձայն ունին բայց քըւէ ոչ՝ թէ եւ երեսփոխան :

Ժողովին դիւանը առանց թուղթի գործ ոչ կ'ընդունի Վարչութեանէն , ոչ կը յդէ Վարչութեան (¹) :

**ՅՕԴ. ՇՅ.**— Վարչութեան անդամք՝ անձիւր իր մասին մէջ առանձին՝ իրրեւ պաշտօնեայ ժողովին՝ պատասխանատու են անոր բեմին առջեւ , եւ Գործ

(¹) Հըտհանչ. — Վարչութիւնը չը կրնար և չ'ունի իրաւասութիւն խնդիր յդէլ ժողովին իքննութիւն ու տարատամ կերպով կարծիր հարցնել . զի քննութիւնը տեղեկագիր կը պահանջէ , և ձողով տեղեկութիւն տալու տեղ չ'ունի . իրմէ վեր մարմին չը կայ պաշտօնական : Իր քննութեանց ու վշենքուն նպատակը՝ միայն վճռի մը հասնիլ է : Իրեն եկած թուղթերը՝ իր դիւանին վրայ աւանդեալ վճիռ կ'սպասեն և ոչ տեղեկագիր :

ծաղիր իշխանութեան Պետք՝ ամենուն կողմէն՝ իբրեւ ընդհանուր պատասխանառու, ըստ Սահմանադրութեան :

Այս պատասխանառութենէն ընդհանուր կերպով կը զերծվի Սահմանադրութեան պատուիրած տարեկան համարատութեամբ :

Սահմանադրութեան պատուիրած համարատութիւնը՝ չ'իմանար եղած անցած դէղ մը մասնաւոր գործօղութեանց ցանկը, այլ տեւական եւ ընդհանուր վերածեւութիւնները (<sup>1</sup>), եղծմանց ու անկանոնութեանց առջեւն առնելու համար նոր հաստաված օրէնքն ու կանոնները, աղդային դործոց անձիւր ճիւղին իր մասին մէջ ինչ քայլ առած յառաջադէմ եւ ո՛ր աստիճան բարդաւաճեալ ըլլալը. վերջապէս չ'իմանար՝ պաշտօնէին պաշտօն վարած ըլլալը դիտնալ, այլ այն պաշտօնին պարտականութիւնը կատարած կամ ո՛ր աստիճան կատարել կրցածը կ'սպասէ իմանալ: Քանզի պաշտօն եւ պարտականութիւն մի եւ նոյն բան չ'իմանար Սահմանադրութիւնը :

Համարատութեամբ հասկցածն ան' է Սահմանադրութեան, ինչ որ Վարչութեան անձիւր մասին համար՝ ոչ իբրեւ պաշտօն այլ իբրեւ պար-

Վարչութեան ընելիքը՝ իբրև Մատակարար Խորհուրդ Ժողովին՝ խնդրանք մըն է կամ առաջարկութիւն, որոյ համար ստիպօղութիւն կրնոյ խնդրել:

Ստորևագոյն դիւանէ մը պաշտօնական թուղթ չը յղվեր բարձրագոյնին այլ կը մատուցվի. ինչպէս բարձրագոյնէն չը մատուցվեր ստորևագոյնին այլ կը յղվի :

(<sup>1</sup>) Réforme.

տականութիւն գծած է իր յօդուածոյ մէջ, ժամանակին համար պահանջելոյ նախառեսութեամբ :

Սոյն աչօք կը քննեն դիւանները, սոյն աչօք կը դատէ Ժողովը ըղկարչութեան համարատութիւնքը :

Եթէ ժամանակին չ'աւանդվին այդ համարատութիւնք Մ. Դիւանին վրայ, պատասխանատու կը մնան Վարչութեան անդամք եւ դլխաւորապէս Գործադիր իշխանութեան Պետը, որում այս մասին հարցում կ'ուղվի Դիւանէն (յօդ. 1) :

**Յ0Դ. ՇՏ.**— Վարչութեան անձիւր մասին տարեկան համարատութիւնքը՝ ատենական շրջանին երկրորդ նիստին մէջ՝ տպեալ կ'աւանդվին Ժողովին դիւանին վրայ (յօդ. 1 եւ 6) :

Ատենապետը՝ զանոնք դիւաններուն կը յղէ իբրև ստիպօղ խնդիր (յօդ. 9, 10, 11) Ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի :

Դիւաններէն տեղեկադիր քանի որ հասնի, տեղեկաբերը կ'ընթեռնու եւ կ'աւանդէ Մ. Դիւանին : Ատենապետը կ'առաջարկէ եւ Ժողովը կ'որոշէ իւրաքանչիւրին վիճաբանութեան օրը :

**Յ0Դ. ՇՊ.**— Համարատութեանց քննութեան արդեամբ Ժողովը կամ կը դումէ կամ կը պարսաւէ Վարչութեան ընթացքը, եւ իր դատավճիռը դադունի քըւէով կը յայտնէ :

Համարատութեան չընդունելութիւնը՝ անվըստահութիւն կ'ենթադրէ Ժողովին կողմէն համարատու ճիւղին վրայ, որ պարտաւորեալ կը դրավի հրաժարելու :

**Յ0Դ. №0.** — Վարչութեան անդամոց հրաժարականը՝ կամ ուղղակի ժողովին կը տըրվի կամ Գործադիր իշխանութեան Պետին, որ՝ եթէ ընդունի՝ կը հաղորդէ 'զանի ժողովին, որ կը հաստատէ 'զայն ընդունելութիւնը եւ նոր ընտրելեաց ցանկը կը խնդրէ (տե՛ս յօդ. 47)։ — Ժողովին արված հրաժարականը՝ եթէ պատճառաբանեալ է, ժողովն իրաւասութեան դիւանին եղրակայութեանը վրայ՝ ձեռամբարձով առանց վէճի՝ կամ կ'ընդունի կամ Գործադիր իշխանութեան կը յղէ ի անօրէնութիւն։

**Յ0Դ. №1.** — Ո՛ր եւ է պարագայի մէջ՝ երբ ժողովին կողմէն անվատահութեան ցոյց կամ կաւկած նշմարէ, Վարչութեան այս կամ այն մասը միշտ իրաւունք ունի վստահութեան քըւէ պահանջելու։

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ կը տեսնէ այդ քըւէին պէտքը։ — Այդ քըւէին արդիւնքը Գործադիր իշխանութեան չը դպչիր։

**Յ0Դ. №2** — Ո՛ր ժամանակ ըլլայ՝ Երեսփոխան մը կրնայ հարցապնդում (<sup>1</sup>) ուղղել Վարչութեան որ եւ է մասին կամ Գործադիր իշխանութեան։ բայց գրաւոր պէտք է տայ իր այդ խնդրանըն Ատենապետին։ — Այդ խնդրանոք կը բացատրէ համառօտիւ հարցման նիւթը եւ կ'ըսէ որու ուղղեալ ըլլալը։ Ատենապետը կը կարդայ 'զանի ժողովին։

Երեսփոխանէ առ Երեսփոխան հարցապնդում արդիւնակալ է։

**Յ0Դ. №3** — Վարչութեան անդամներէն անի

(1) = *Interpellation.*

որում անկ է պատասխանել՝ իր կարծիքը տալէն ետքը, Ժողովը կը վճռէ՝ ձեռամբարձով առանց վէճի՝ միթէ կամի լսել այդ հարցապնդումը, եւ կ'որոշէ օրը :

Երաւունք է դոնիակ նստել եթէ խնդրէ հարցապնդեալ պաշտօնեայն :

Հարցապնդումը լմբննալէն եւ վէճը դոցվելէն ետքը, Ժողովը կը դառնայ իր օրակարդին :

**ՅՕԴ. Տ4.**—Գործադիր իշխանութեան Պետին համար անվստահութեան քըւէ չ'առաջարկվիր, եւ ոչ իսկ ինք կրնայ վստահութեան քըւէ պահանջել։ Իր անկումը չը կրնար տեղի ունենալ այլ միայն այն ճամբով որով հասած է 'յիշխանութիւն (յօդ. 13, 50)։

Բայց կրնայ ամբաստանվիլ՝ երեսվոխանաց կողմէն՝ Աահմանադրութեան հակառակ ընթացքի մը համար, կամ անոր գործադրութեան անհոգութեանը համար։

Երբոր կանոնաւոր (յօդ. 55) ամբաստանադիր մ'աւանդվի Ս. Դիւանին վրայ, Ատենապետը 'զանի կը հաղորդէ Ժողովին եւ անոր կարծիքն առանց վէճի առնելէն ետքը կը յղէ Ատենապետայ դիւանին նախաքննութեանը։

Այս դիւանն իր տեղեկադրով կամ պարզապէս մերժման կ'եղրակայէ կամ նկատառման։

Տեղեկադրին եղրակայութեան վրայ Ժողովը կ'արտասանէ իր վճիռը ձեռամբարձով առանց վէճի, եւ ըստ այնմ՝ կամ կ'անցնի իր օրակարդին եթէ մերժումն արտասանէ, կամ ելք կուտայ ամբաստանութեան եթէ նկատառումն արտասանէ։

Այս ետքի պարագային մէջ՝ յատուկ մասնաժողով մը կ'ընտըրվի (յօդ. 7) ամբաստանութիւնը քննելու համար :

Երբ այս քննիչ մասնաժողովին տեղեկադիրը՝ տպեալ եւ երեսփոխանաց ցրւեալ՝ աւանդվի Դիւանին, յետ ընթերցման եթէ ընթերցումն ըլլայ, Ատենապետը՝ Ժողովին կամքն առնելով առանց վէճի՝ կը յղէ ՚զայս տեղեկադիրը Ատենապետաց դիւանին, ի վերաքննութիւն :

Վերաքննեալ տեղեկադրին եկած օրը՝ Ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը, եւ կը դատէ ՚զամբաստանութիւնը :

Այս դատական նիստը դանիակ է : Ատենապետը ՚զանի կը դումարէ երեսփոխանաց օրինական մեծամասնութեան ներկայութեամբը (յօդ. 50), եւ չնորհական դասակարգութեան<sup>(1)</sup> բարձրագոյնին մէջ ծերագոյնին նախագահութեամբը :

Քըւէն դադանի է, եւ ամբաստանօղը ըըւէ չ'ունին :

Եթէ ամբաստանութիւնն իրաւացի դատվի Ժողովէն, Դիւանը կ'առաջարկէ անվտանութեան քըւէն, որ պարտաւոր իշխանութեան անկումը կ'ենթադրէ . որոյ արդեամբ եւ յանուն Ժողովին՝ Դիւանը կը խնդրէ Գործադիր իշխանութենէն իր հրաժարականը, ՚զոր կը պարտաւորի տալ :

Եթէ ամբաստանութիւնն անիրաւի դատվի Ժողովէն, Դիւանը կ'առաջարկէ վստահութեան քըւէն որ անպարտ իշխանութեան հաստատութիւնը

(1) Hiérarchie cléricale.

կ'ամրապնդէ , եւ որոյ արդեամբ՝ 'զոր Դիւանը կը հաղորդէ Գործադիր իշխանութեան՝ ամբաստանողք կը պարտաւորին մեղայ (¹) ըսել Բարձրաշնորհ . Սըրաբագնին դռնբաց նիստի մէջ :

Սոյն օրինակ կրնայ ամբաստանվիլ եւ Վարչութեան անձիւր ճիւղ , եւ Ժողովը սոյն ճամբով կը դիմէ իր դատավճուին :

**ՅՈՒ. №5.**— Վարչութեան անդամք չեն կրնար ամբաստանել Գործադիր իշխանութեան Պետը , եթէ հրաժարականնին չը տան նախ . եւ ոչ իսկ՝ երբ արդէն այն իշխանութեան կողմէն վարչական փոխուման մ 'առաջարկութիւն աւանդեալ է Դիւանին :

**ՅՈՒ. №6.**— Եթէ Գործադիր իշխանութիւնը Վարչութեան մասնակի կամ ամբողջակի փոփոխումն առաջարկէ Ժողովին , պատճառաբանեալ կ'ընէ 'զայդ առաջարկութիւնը . եւ Ժողովը իրաւասութեան դիւանին եղբակայութեանը վրայ՝ կ'ընդունի կամ կ'օրաձդէ 'զառաջարկութիւնը , ձեռամբարձով առանց վէճի :

Զօրաձդումը սա բառերով կը պատճառաբանէ . և Ժողովը ըդ Գործադիր իշխանութեան ուշադրութիւնը վերստիրնին հրաւիրելով առաջարկեալ փոփոխումն վրայ՝ կը յապացէ 'զիւր հաճութիւնը » :

Եթէ պնդէ Գործադիր իշխանութիւնը իւր առաջարկութեան վրայ եւ 'զանի վարչական խընդիր (²) ընէ , Ժողովը արդարութեամբ կը վիճնի՝ պատասխանատութեան պարտքին յարակից ձեռ-

(¹) Amende honorable, (²) Question de cabinet.

նաղատութեան (¹) իրաւունքին առջեւ, Եթէ չ'ուղեր՝ ոչ իր համարառութեան իրաւունքը տկարցնել, ոչ հրաժարման խնդրի մը վարանօքն զբաղիլ:

**ՅՕԴ. ՏՊ.**— Եթէ Գործադիր իշխանութիւնը՝ զիւր հրաժարականը տայ, պատճառաբանեալ սկզբք է ըլլայ այդ հրաժարադիրը. Ժողովը՝ յետընթերցման՝ Ատենապետաց դիւանին նախաքննութեանը կը յանձնէ հրաժարադիրը, եւ այս դիւանին եղրակայութեանը վրայ՝ պատճառները քըննելով՝ կ'ընդունի կամ չ'ընդունիր առաջարկեալ հրաժարումը: Եթէ չ'ընդունի, պատճառաբանեալ կը հաղորդէ զիւր որոշումը՝ Գործադիր իշխանութեան, որում միայն կը մնայ որոշել իր ընելիքը:

Եթէ պատրիարքական աթոռը թափուր մնայ, Վարչութիւնը՝ Խառն Խորհուրդ կազմելով՝ տեղապահութեան ընտրելեաց զեղչելի եռանուն ցանկ մը կը պատրաստէ եւ կը մատուցնէ Ժողովին: Ժողովը՝ գումարեալ յայնժամ Ատենապետէն՝ կը քննէ զայն ցանկը նոյն կանոններով որով քննեց պատրիարքական ընտրելեաց ցանկը (յօդ. 47):

Ժողովին քեմական յարաբերութիւնքը Տեղապահին հետ նոյն են որպէս Պատրիարքին հետ:

**ՅՕԴ. ՏՊ.**— Կեղլոնական Վարչութեան արտաքին յարաբերութիւններէն ծաղած խնդիրները անուղղակի կու դան կ'ելլին ժողովին ատեանը՝ Պատրիարք Սրբազնին միջնորդութեամբը:

Այս ճամբով եկած թուղթերը՝ կամ հրամանա-

(¹) *Liberté d'action.*

գիր է Բ. Դոնէն, կամ կոնդակ վեհաշնորհ կաթողիկոսէն, կամ խնդրագիր Գաւառական ժողովներէն եւ Առաջնորդներէն, եւ կամ աղերսագիր հասարակութեան կողմէն, Պատրիարք Սրբազնին ուղղեալ . որ ասոնց մէջէն Ժողովին ներկայելիները կը հաղորդէ անոր՝ կցելով միանդամայն Վարչութեան կարծիքը նոյն խնդրին վրայ եւ պարտ ու պատշաճն իմացնելով :

Ժողովն՝ ըստ պատշաճին՝ կամ Վարչութեան կը յղէ ի տնօրէնութիւն, կամ իր դիւանաց նախաքննութենէն կ'անցնէ խնդիրը, կամ մասնաժողովէ մը եւ կամ Ատենապետաց դիւանէն, եւ ասոնց տեղեկագրին վրայ կը վիճէ, կ'որոշէ իր պատասխանը եւ կը հաղորդէ իր Նախագահին առ ի տալ որում անկ է :

**ՅՕԴ. ՏՅ.**— Հասարակութեան կողմէն աղդային Ժողովին մատուցվելու հանրագիր, աղերսագիր, ըստորագրեալ ըլլալու է . ըստորագրօղաց երկիրը, արհեստն ու բնակարանը նշանակեալ, կամ գոնէ չորսինը եթէ շատոր են :

Ըստորագրութիւնք վաւերացեալ ըլլալու են տեղին Թաղական խորհուրդէն :

Եթէ այդ վաւերացումը զլացեալ է, այդ զլացումը նշանակելու են ըստորագրօղք աղերսագրին աւարտը :

Հանրագիր թէ աղերսագիր Նախագահ Սրբազնին պէտք է ուղիղի եւ անոր տրվի կամ Պատրիարքարանի դիւանատան՝ մէկ կամքանի մանձանց ձեռօք :

Ժողովարանին բակը խոնեալ բազմութեամբ բերված աղերսագիրը ոչ նախագահը կրնայ ընդունել ոչ Ատենապետը :

Երեսիոխանի մը արդիլեալ է միջնորդ կանոնիլ բազմութեան եւ Ժողովին մէջ տեղ • պարագային ծանրութեանը համեմատ ենթակայ կ'ըլլայ 101 յօդուածին տնօրինած պատիմներէն մէկուն :

**ՅՕ.** — Աղերսագիրներն իրենց եկած կարգովը կը տօմարագրէ <sup>(1)</sup> Պատրիարքարանի դիւանապետը աղերսագրոց տօմարագրքին <sup>(2)</sup> մէջ, նշանակելով աղերսագրին կարգին թիւը, ըստորագրովին երկիրը, արհեստն ու բնակարանը, նոյնպէս եւ խիստ համառօտ կերպով աղերսին առարկան :

Տօմարագրեալ աղերսագիրը դիւանապետին ձեռոք կ'աւանդվի Ս. Գիւանին, եւ Ատենապետը՝ Ժողովին համառօտ մը ծանուցնելով նիւթը՝ կը յղէ Յարաբերութեանց դիւանին, Ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի :

Եթէ նոյն խնդրին վերաբերեալ խնդրով մ'ըլլբաղած է յատուկ մասնաժողով մը կամ ուրիշ դիւան մը, ուղղակի հոն կը յղէ : Զայս յղումը Յարաբերութեանց դիւանն ալ կրնայ ընել :

Ո՛ր եւ է երեսիոխան կրնայ լիովին ծանօթութիւն առնուլ աղերսագիրներէն, անոնց քննութեանն զբաղող դիւանին դիմելով :

**ՅԱ.** — Ամեն մէկ աղերսագիր՝ տեղեկագրի մը եւ որոշման մը նիւթ է քննիչ դիւանին մէջ : Տրված որոշումն՝ իբրեւ պատասխան՝ իմաց կը

(<sup>1</sup>) Enregister. (<sup>2</sup>) Régistre.

տրվի աղերսագրողին, աղերսագրին կարդին թըւահամարովը որոյ առջեւ նշանակեալ է այդ որոշումը :

Քննիչ դիւանը կամ մասնաժողովը Ժողովին առեանը կը բերէ այն աղերսագիրները՝ զորս Վարչութեան յղեւ կ'եղրակայէ, եւ զանոնք որ օդակար կը դատէ Ժողովին քննութեանն ենթարկել :

Առաջնութիւն կամ ստիպօղութիւն կրնայ խընդըրվիլ աղերսագրի մը քննութեան համար . Ժողովը կ'որոշէ սոյն պարագային մէջ՝ ձեռամբարձով առանց վէճի :

Երեք ամսի մէջ գոնէ՝ Վարչութիւնը կը ծանուցնէ աղդային օրագրի միջոցով ինչ ելք որ առւաւ Ժողովին իրեն յղեալ աղերսագրոց :

### Թ. ԳԼՈՒԽ

Նելքին և արտաքին բարեկարգութիւն  
Աղդային Ժողովին .

**ՅՕԴ. ԳԶ.**— Ժողովին բարեկարգութիւնը՝ 'յանուն Ժողովին՝ նախադահ Սրբազնը կը հոգայ, անձամբ կամ իւր փոխանորդին ձեռօք :

Փոխանորդ Հօր կը վերաբերի նաեւ Ժողովարանին նիւթական սկիտոյից հոգը :

**ՅՕԴ. ԳՅ.**— Ո՛չ ոք օտար՝ ո՛չ մէկ պատճառանօք՝ չը կրնայ սպրդիլ երեսիոխանաց բազմած շրջապատին մէջ :

**ՅՕԴ. ԳԴ.**— Ժողովուրդին ունկնդրութեան իրաւունքը լիովին վճարված է ատենագրութեանց հրատարակմամբը, որ՝ իրեւ արձագանք Ժողովին՝ համօրէն աղդին լազութեանը կը հասնի :

Ներկայութեամբ ունկնդրութեան թոյլառութիւնը շնորհ մըն է ժողովին կողմէն :

Վերնատունը՝ տիկնայց յատկացեալ է :

Դասը՝ եկեղեցական ունկնդրաց, դաւառական եւ թաղական ժողովականաց ու խորհրդականաց, նախկին երեսփոխանաց եւ պատւառոր օտարականաց յատկացեալ է, 'զորոնք բարապանք' կ'ընդունին ու կը տեղաւորեն :

Նիստին բոլոր տեւողութեան ատեն՝ ունկնդիրք լուռ կենալու են եւ նստած :

Հաւանութեան կամ տժգոհութեան ձայն բարձրացնողը խոկոյն դուրս կը հանվի ունկնդրութեան տեղէն՝ բարեկարգութեան պահպան բարապանաց (<sup>1</sup>) ձեռօք :

Նիստը վրդովելով ժողովին աշխատանաց արդելք հանօղը՝ անմիջապէս ոստիկանութեան կը յանձնվի Պատրիարք Արքազանին կողմէն :

Յօն. Ֆօ. — Պատրիարք Արքազանին հոգն է հըսկել Ազգային ժողովին ներքին եւ արտաքին ապահովութեան :

Առ այս պէտք եղած միջոցները ձեռք կ'առնու, հարկաւոր դատած հրամանները կու տայ, եւ ըստ հարկին՝ զինեալ զօրութիւն կը խնդրէ ոստիկանութենէն, իր հրամանին տակ գործելու :

Պատրիարքական իշխանութեան սահմանը՝ թէ Ազգին եւ թէ տէրութեան առջեւ՝ իր ուխտին ու պատասխանատութեան սահմանն է :

(<sup>1</sup>) *Huissier.* — Եպահուածութեան առաջնային պահպան է:

## Ժ. ԳԼՈՒԽ

Պատժական կանոնը.

**ՅՕԴ. ԳԵ.**— Աղդային ժողովին կանոնադանց անդամոց տնօրինվելու բարեկարգական պատիժները՝ չորս աստիճան՝ սայոնք են։

**Հ** **1<sup>o</sup>** Ի կարդ կոչում։  
**2<sup>o</sup>** Ատենադրութեամբ ի կարդ կոչում։

**Հ** **3<sup>o</sup>** Յանդիմանութիւն։  
**4<sup>o</sup>** Պարսաւանօք յանդիմանութիւն։

Մեղմ պատիժները Ատենապետը կը տնօրինէ։  
Խիստ պատիժները ժողովը կ'արտասանէ։

**ՅՕԴ. ԳՅ.**— Ի կարդ կը կոչվի այն ատենաբանն որ կարդէն խոտորի, այն անդամն որ 28 յօդուածին պատուիրանքը չը յարդելով կամ որ եւ է կերպով բարեկարգութիւնը խանդարէ։

**ՅՕԴ. ԳՅ.**— Ատենադրութեամբ ի կարդ կը կոչվի այն անդամն որ մի եւ նոյն նիստի մէջ երկու անդամ, կամ երկու յաջորդ նիստերու մէջ ի կարդ կոչվեցաւ։

**ՅՕԴ. ԳԳ.**— Ատենապետն ինքնին անկախ հեղինակութիւն ունի ի կարդ կոչելու։

Խօսքը կը չնորհվի այն ատենաբանին որ՝ ի կարդ կոչեալ՝ կը հպատակի Ատենապետին հեղինակութեանն ու կը խնդրէ՝ զինքն արդարացնել։

Անի որ՝ խօսելու արտօնութիւնը չ'առած՝ զինքն ի կարդ կոչել տուաւ, խօսք չ'ունի զինքն արդարացնելու համար այլ միայն ատենանին վերջերը, եթէ Ատենապետը չը հաճի։

Եթէ Ատենապետը ետ չ'առաւ ի կարգ կոչումը ,  
ատենադպիրք զանի կը նշանակեն ատենագրու-  
թեան մէջ :

**ՅՕԴ. 100.** — Երբոր ատենաբան մը մի եւ նոյն  
նիստի մէջ երկու անդամ ի կարգ կոչվի , Ժողովը  
կրնայ՝ Ատենապետին առաջարկութեան վրայ՝ ար-  
դիլել զանի խօսքէ այնուհետեւ այն նիստին մէջ :  
Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի :

**ՅՕԴ. 101.** — Յանդիմանութիւն կ'արտասանվի  
այն անդամին դէմ .

1. Որ ատենագրութեամբ ի կարգ կոչումէն ետ-  
քը՝ չը դառնար ի կարգ եւ ի պարտականութիւն .

2. Որ մի եւ նոյն նիստի մէջ երեք անդամ կամ  
յաջորդապէս երեք նիստի մէջ ի կարգ կոչման  
պատժին արժանանայ .

3. Որ Ժողովին մէջ աղմրկայոյդ տեսարան մը  
յարուցնելու նախաձեռնէ <sup>(1)</sup> , կամ օրէնսդրական  
աշխատանքէ հաւաքապէս ձեռնպահութիւն <sup>(2)</sup>  
թելադրէ <sup>(3)</sup> ,

4. Որ իր պաշտօնակցաց մէկուն կամ մէկ մա-  
սին դէմ նախատինք կամ գրգոիչ սպառնալիք  
ուղղէ :

**ՅՕԴ. 102.** — Պարսաւանօք յանդիմանութիւն  
կ'արտասանվի այն անդամին դէմ .

1. Որ պարզ յանդիմանութեան դիմադրձու-  
թիւն ընէ .

2. Որ բռնութեանց դիմէ կամ ունկնդրաց յար-  
ձակման ձայնատու ըլլայ .

<sup>(1)</sup> Prendre l'initiative. <sup>(2)</sup> Abstention. <sup>(3)</sup> Suggérer.

3. Որ հայրոյէ կամ ընկերին ձեռք վերցնէ .

4. Որ ըզ ժողովը անարդէ , կամ անոր մէկ մասը , կամ Ատենապետը :

**ՅՈՒ. 103.**— Պարսաւանօք յանդիմանութիւնը հարկ կը դնէ յանցաւոր երեսփոխանին՝ իսկոյն ատեանը թողուլ դուրս ելլիլ եւ զգուշանալ երեւիլէ մէյ մ'ալ նոյն նիստին մէջ :

Եթէ չ'ելլի , նախագահը հրաման կ'ընէ . եթէ այս հրամանին անհնաղանդութիւն ըլլայ , նիստը կը վերնայ , եւ յանցաւորին մեկնիլէն ետքը կրնայ դարձեալ շարունակվիլ . բայց անհնաղանդ յանցաւորը յաջորդ նիստին մէջ խօսելու իրաւունքը կը կորումնէ :

**ՅՈՒ. 104.**— Յանդիմանութիւնները՝ թէ պարզ եւ թէ պարսաւանօք՝ ժողովը կ'արտասանէ ձեռամբարձով առանց վէճի , Ատենապետին՝ 'յանուն կանոնադրութեան՝ առաջարկութեանը վրայ , եւ նախագահը կը դորձադրէ :

Երեսփոխանը՝ որու դէմ առաջարկվի այս բարեկարգական պատիմներէն մէկը կամ միւսը , միշտ իրաւունք ունի իր արդարացման համար խօսելու կամ 'յանուն իւր խօսեցնելու իրպաշտօնակցաց մէկը:

Ժողովին արտասանած պատիմները ատենագրութեանց մէջ կ'արձանագրվին , իսկ այս վճիռներուն դէմ հետեւ յանդգնօղին անունը՝ եթէ ըլլայ այդ աստիճան կանոնաղանց՝ հասարակաց թերթերով ալ կը տարածայնի , ի հրապարակ տալով ատենագրութեան այն քաղուածը (<sup>1</sup>) ուր պատիմը յիշեալ է :

(<sup>1</sup>) Extrait.

**ՅՕԴ. 105.** — Կ'ընկնի երեսվոխանութենէ այն անդամն որ ժողովարանին մէջը կամ շուրջը ոճիր մը գործէ, կամ իր օրէնսդրական պաշտօնին տեւման ատեն պատժական ատեանի մը կողմէն դատապարտութիւն մը կրէ որ զրկէ զինքը՝ իբրեւ բարոյապէս անբաւական՝ ընտրելութեան իրաւունքէն, ըստ Սահմանադրութեան :

Պաշտօնանկութիւնը (<sup>1</sup>) ժողովէն կ'արտասանվի՝ ի տես ապացուցիչ նիւթոց (pieces justificatives) :

**ՅՕԴ. 106.** — Եթէ ժողովը աղմըկայոյդ ըլլայ, եւ Ատենապետը կամ Նախադահը չը կարենան հանդարտութիւնը վերահաստատել, կ'աղդարաբեն թէ նիստը դադրեցնելու տի պարտաւորին :

Երկրորդ ապարդիւն աղդէն ետքը՝ նիստը կը վերնայ կէս ժամի չափ : — Կէս ժամէն՝ նիստ ու վիճաբանութիւն դարձեալ կը շարունակվին :

Եթէ աղմուկը նորէն սկըսի, Ատենապետը՝ ժողովին իւմաց տալէն ետքը՝ կրնայ վիճաբանութիւնը փակեալ յայտարարել, եւ անմիջապէս քըւէարկութեան ձեռնարկել, եթէ տեղի կայ :

Եթէ աղմուկը մէյ մ'ալ սկըսի ու քըւէարկութիւնը խափանէ, կամ ժողովին մէջ բռնութեան դիմողներ ըլլան կամ իրարու ձեռք վերցնողներ, իսկոյն կը վերնայ նիստը (<sup>2</sup>) :

(<sup>1</sup>) Déchéance.

(<sup>2</sup>) Պատժական դլսին մէջ սխալմամբ ընկած սյս յօդուածը՝ բարեկարգութեան դլսին մէջ Թ5 յօդուած պիտի ըլլայ . և անկէ հոս հետեւեալ յոդուածոց թիւերն ըստ այնմ տի փոփոխվին :

**ԺԱ. ԳԼՈՒԽ**

Բացակայութիւն .

**ՅՕԴ. 107.** — Բացակայութեան հզօր եւ բանաւոր պատճառներ են՝

1. Ճամբորդութիւն .

2. Հիւանդութիւն .

3. Հրդեհ թաղին մէջ .

4. Ծանր հիւանդ տան մէջ :

**ՅՕՏ. 108.** — Նախաղահ Սրբաղանին ներկայութիւնը միշտ կարեւոր (<sup>1</sup>) է ժողովին չուքն ու պատկառանքն աւելցնելու համար , եւ երբեմն անտնօրինելի՛ (<sup>2</sup>) ժողովին ներքին եւ արտաքին ապահովութեանը համար :

Երբոր բանաւոր պատճառով կամ աղգային կարեւոր ու ստիպող գործով մը զբաղեալ՝ ստիպվի բացակայութեան , իր տեղ եպիսկոպոս մը կը ցուցնէ առժամեայ Նախաղահ այն օրվան նիստին :

**ՅՕՖ. 109.** — Մայր Դիւանին անդամոց ներկայութիւնը միշտ հարկաւոր է ատեանին բացման ճիշտորոշեալ ժամուն . մանաւանդ Ատենապետինն ու խմբագիր ատենադպրինը անտնօրինելի է , մէկը ատեանը բանալու համար , միւսը ատենադրութեան վրայ դիտօղութեանց պատասխանելու համար :

Երբոր Ատենապետը հզօր պատճառով մը ստիպվի բացակայութեան , վերջին հարկաւորութիւն է բաւական ժամանակաւ իմաց տալ երկու դերատենապետաց միանգամայն , զի եթէ մէկն ալ նը-

(<sup>1</sup>) *Important.* (<sup>2</sup>) *Indispensable.*

մանապէս անյաղթելի ուժի մը տակ գտվի՝ կարենայ միւսին իմաց տալու միջոց ունենալ :

Նմանօրինակ կը պարտին իրարու իմաց տալ եւ ատենադպիրք :

Ժողովին պատւարժանութեանը դպչելի անտեղութիւն է՝ դիւանին անդամոց բացակայութեան երեսէն՝ առժամեայ դիւանով ատեան բանալու հարկին տակ գտվիլ (յօդ. 2) :

**ՅՕԴ. 110.— Հրաժարեալ կը համարվի սին եւ բեսխոխանը,**

1. Որ՝ առանց բանաւոր պատճառի երկու յաջորդնիստերու բացակայ մնալով, երրորդին անձամբ չը պատասխանէ նախադահական յատուկ կոչմանը. ասի՝ իր յանձնառած պաշտօնին անհոգութիւնը ըրաւ երեք անդամ :

2. Որ՝ առանց բանաւոր պատճառ յայսնած ըլլալու՝ ատենական շրջանի մը երեք անբաւական նիստերու մէջ անուանական կոչման չը պատասխանէ . ասի՝ Ազդին գործը ետ մնալու պատճառ եղաւ երեք անդամ :

Այս դասի անդամները՝ եռապատիկ ոլարտազանց՝ 101 յօդուածին խստութեանը կը հանդիպին, որ բացակայութեան վերադիրով այսքան կը ծանրանայ եւ կ'ըլլայ վերջնական բացակայութեան, 'զոր ժողովը կը վճռէ ձեռամբարձով առանց վէճի՝ Ատենապետին՝ յանուն կանոնադրութեան առաջարկութեանը վրայ (¹) :

(¹) ՀՐԱՆՈՒՆՔ.— Դիւանը պատժատետը մ'ունի տօմարաձև, որոյ մէջ անձիւը պատիժ իր երկու էջն ունի դէմէ դէմ. Հոն կը նշանակեն ատենադպիրք անձիւը նիստին մէջ տեղի ունեցած պատիժը, նոյնպէս և բացակայութիւնքը :

Պարտադանցութեամբ հրաժարեալ համարելոց  
անունները՝ ատենագրութեանց մէջ նշանակվելէն  
զատ՝ հասարակաց թերթերն ալ կը տանեն ընտրո-  
ղաց ականճը :

**Յօդ. 111.** — Թէ կանոնին հրաժարուցած թէ  
ինքնին հրաժարօղաց (<sup>1</sup>) եւ թէ վախճանեալ երես-  
փոխանաց տեղ նոր ընտրութիւնները ատենական  
տարւոյն վերջը կ'ըլլան ապրիլի սկիզբը՝ ընդհա-  
նուր ընտրութեանց ատեն :

Սակայն եթէ Ժողովէն սկակսող անդամոց թիւը  
հաւանական թիւին (յօդ. 49) ամբողջութիւնը  
խորել սպառնայ (այսինքն օրինական թիւին քա-  
ռորդը սկակսի), Ժողովը կրնայ՝ երբ որ ըլլայ՝  
պատահական ընտրութիւն հրամայել, Նախադահ  
Արքադանին կամ Դիւանին առաջարկութեանը վրայ:

Եթէ դիւանին մէջ պատահի հրաժարումը, ան-  
միջապէս յաջորդ նիստին կ'ըլլայ ընտրութիւնը  
(տե՛ս յօդ. 5) :

Ամեն նիստին վերջերը, նոյն տետրը աչքէ անցնելով ե-  
թէ կոյ պարտազանցութեան աստիճանը հասած անուն՝  
ցանկը կու տան Ատենապետին, որ 'զանի կը կարդոյ և Ժո-  
ղովը կ'արտասանէ անոնց հրաժարեալ համարումը :


(<sup>1</sup>) Հըանանք. — Նկատելով ըստ բախտի (au hasard) ընտրութեանց անտեղութիւնները, որմէ ստեղ հրաժար-  
մունք կը պատահին, նկատելով միանդամայն աղդային երես-  
փոխանութեան պատւարժանութիւնը (dignité), Ազդային  
ժողովը՝ որոշելով կանխիկ թէ չը տի վաւերացնէ 'զայն ընտ-  
րութիւնն որ չ'է ընկերացեալ ընտրեալին յանձնառութիւնն  
ապահովող ծանօթագրով մը՝ ընտրօղ ժողովին կողմէն տուեալ,  
ոկտք է ըստ այնմ հրահանգէ ընտրօղ ժողովները (յօդ. 5) :

**ՎԵՐՁԻՆ ՅՕԴ.** — Եթէ ատենական շրջանի մը մէջ երկու անդամ միայն՝ յաջորդապէս թէ ընդմիջապէս՝ նիստը բոլորովին անբաւական մընալով տեղի չ'ունենայ կամ վերնայ, սոսկ որոշօղ մասին բացակայութեան երեսէն. Եւ երրորդին՝ եթէ երեսփոխանք նախագահական յատուկ կոչնապրին խուլ մնան ու նիստը դարձեալ անբաւական թողուն (յօդ. 52), բացակայ մեծամասնութիւնը՝ իբրեւ եռապատիկ պարտազանց՝ ըստ կանոնի հրաժարեալ կը համարվի (յօդ. 110) եւ հետեւաբար ժողովն ինքնին եւ ըստ օրինի լուծեալ :

Եթէ այդ անակնկալ այլ ոչ անկարելի դէպը տեղի ունենայ, նախագահ Սրբազանը անհրաժեշտ հարկին մէջ կը դտվի ստիպօղական ատեան բանալու որ եւ է թըրով ներկայ անդամոց, եւ ժողովին այդ օրինական արժանահաս լուծումը՝ յանուն Աղդին արտասանելով՝ իբրեւ Գործադիր աղդային իշխանութեան, որոյ կը մնայ յայնժամ ինք մինակ աւանդապահ :

Ներկայք կ'ըստորագրեն ատենագրութիւնը :  
Պատրիարք Սրբազանը՝ պատասխանատու Աղդին եւ Տէրութեան առջեւ՝ անմիջապէս հետեւեալ օրը ստիպօղական ատեանին վճիռն հրատարակելով, ընդհանրական կոչում կ'ընէ ընտրող ժողովոց եւ նոր ընտրութեանց հրահանգները կու տայ :

Ստիպօղական վճիռն ըստորագրօղ անդամք՝ արդէն խոկ եւ իրաւուսա (du droit) վերընտրեալ կը նկատվին նոր երեսփոխանութեան մէջ :



Վարչական  
գույքական

Յօդ. 3 ին վերջին պարբերութիւնը կարդա սապէս՝  
«Անմիջապէս կը ձեռնարկվի Ս. Դիւանին  
կազմութեանը, եթէ ժամանակը ներէ եւ  
ժողովը ուզէ . եթէ ոչ ութ օրէն վերըստին  
կը գումարվի նիստը սոյն գործողութեան  
համար եւ ի ներկայութեան նորընտիր ան-  
դամոց :

Յօդ. 5 ին մէջ՝ (յօդ. 41) կարդա՝ (յօդ. 47):

Յօդ. 14 ին առաջին պարբերութիւնը կարդա  
սապէս՝ «Ազգային ժողովը նիստ կ'ընէ՝ քանի  
որ ունի օրակարգ՝ կանոնաւորապէս երկու շա-  
բաթն անգամ մը (Տես բացառութիւնքը 3,6  
եւ 53 յօդուածոց մէջ) :  
—Սովորական տեղն է՝ Ղալաթիոյ ժողովա-  
րանը, օրը՝ ուրբաթ, ժամը՝ 6 էն մինչեւ 10:

Յօդ. 26 ին վերջը կցէ՝ «Ի բաց առեալ են առա-  
ջարկութեան մը հեղինակն ու տեղեկաբերը :

Յօդ. 29 ին մէջ՝ (յօդ. 81,82) կարդա՝ (յօդ. 83,84):

Յօդ. 54 ին չորրորդ պարբերութիւն աւելցու՝  
«Համարատուութենէն կը ծագի բնականա-  
պէս եւ տարեկան պիւճէին խնդիրը, որոյ  
քննութիւնն ու սահմանումը հաւանօրէն եր-  
րորդ կամ չորրորդ նիստը կը գրաւեն :

## ԲԱՇԽՈՒՄ

Եկ

ԴԱՍԱԿԱՐՔՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Հստ բաժանման թաղից ու դաւառաց .

---

ՎԵՐՋԻՆ ՅՈՒ. ին մէջ՝ օրինակաց ոմանց մէջ փախած  
(du droit) տառասիալը կարդալու է ( de droit ) :

# ՅԱՆԿ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ԱՊԱԲԵՒԻ ԿԱՐԳՈՎ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԲԱՌԱՋՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԲԵՄԱԿԱՆ ԽԻ ՀՈՄԱՆԻՇ ՔԱՆԻ ՄՅ ԲԱՌԻՑ ՎՐԱՅ

ԺՈՂՈՎ, ASSEMBLÉE.—

ԽՈՇՈՒՐԴ CONSEIL.—

Այս բառերը՝ բեմի պակասութենէն մեր մէջ՝ խառն ու շփոթ կերպով գործածվելու վրայ են մէկը միւսին տեղ, իբր թէ՝ ժողովն ալ գումարվող մարմին մըն է խորհուրդն ալ։ Բայց թէ հասարակ բարբառի մէջ և թէ մանաւանդ բեմական լեզուի մէջ՝ ըստ պաշտօնի՝ մեծ է տարբերութիւննին որ սա սահմաններուն մէջ պայծառ կը տեսվի։

Ժողովուրդէ ընտրեալ և 'զանի ներկայացնող օրէնսդիր և վճռատու մարմին մըն է, որ իր դրած օրինաց գործադիր պաշտօնեաներ կ'ընտրէ և անոնց վրայ նիւթապէս համարառութեամբ կը հսկէ։ —

Խորհուրդ՝ ժողովէ մ'ընտրեալ և անոր պաշտօնեայ մատակարար մարմին մըն է, որ 'զինքն ընտրող ժողովին կամացը համեմատ կը շարժի և անոր նիւթապէս համարատու է։

Խորհուրդը ստորակարգեալ է ժողովի մը։ մինչդեռ ժողովը չ'է ստորակարգեալ ուրիշ ժողովի մը։ Ազգային ժողովն ինչ որ է իր ընդարձակ ըրջանակին մէջ, գաւառային և թաղային ժողովները նոյն են իրենց յաւէտ կամ նուազ նեղ ըրջանակին մէջ։ մէկը՝ ազգային ընդհանուր խնդրոց մէջ վճռատու է, միւսները՝ մասնաւոր և տեղական խնդրոց մէջ վճռատու են։ Ատենով՝ անուշադրութեամբ ժողով մականուանեալ մեր կրօնական ու Քաղաքական խորհուրդները դեռ կը կրեն պիտակարար այդ մակդիրը՝ զոր ժամանակ է սրբագրելու։ Այս նկատողութիւններով՝ պէտք է որոշել ժողովարանը խորհրդարանէն որ cabinet բառին միայն կը պատասխանէ և վարչական խորհուրդ ըսել է, ժողովի համար չ'ըսվիր։

Ժողովն՝ իբրեւ ներկայացուցիչ մարմին՝ իրեն մակդիր կը պահանջէ միայն այն բառը որ ըզ ներկայացուցեալը կը ցուցնէ։ զոր օրինակ՝ աղդային ժողով եթէ՝ զազդը կը

ներկայացնէ . գաւառային ժողով՝ եթէ ըզ գաւառը . թա-  
ղային ժողով՝ եթէ ըզ թաղը : Եթէ ժողովին տրված  
վերոյիշեալ սահմանն ուղիղ է , ըսելու չէ՝ աղջային ընդհա-  
նուր ժողով , վասն զի մեկ հատ է ոյս ժողովը և զԱղջը  
ներկայացնօղ մասնաւոր ժողովներ չը կան . աղջին մաս-  
նաւոր ժողովները՝ իրենց ներկայացուցած մասին անուամբը  
կը ճանչվին . աղջինն են բայց չ'են աղջային : Ըսվելու չ'ե  
գաւառային ընդհանուր . կամ մասնաւոր ժողով , վասն զի  
դաւառը ներկայացնօղ ուրիշ մասնաւոր կամ ընդհանուր ժո-  
ղով չը կայ . իրենց շրջանակին մեջ մեկ հատ են ոյս ժողովնե-  
րը , և այդ տեղուրդ բառերը տեղ չ'ունին , իմաստի պայ-  
ծառութիւնն աղարտելէ դատ չեն ծառայեր ուրիշ բանի :

Հոմանիշ են՝ յանչնախուժը , հասնաժողովը և հանախորհութը :  
Յանձնախումբ՝ ընդհանուր կերպով կ'իմացնէ քիչ թըրւով  
խումբ մանձինք որոց յատկապէս յանձված գործ մը , խնդիր  
մը , քննութիւն մը : Մասնաժողով (ինչպէս անունը կ'ըսէ)՝  
ժողովէ մը կարգեալ և իր անդամներէն բաղկացեալ . յանձ-  
նախումբն է և անոր մեկ պղտի մասն ըսել է : Մասնախոր-  
հուրդ՝ (ինչպէս անունը կ'ըսէ) յատկապէս խորհուրդն է մը  
կարգեալ և իր անդամներէն բաղկացեալ . յանձնախումբն  
է և անոր մեկ պղտի մասն ըսել է : Ժողով մը կընոյ մասնա-  
ժողովներու բաժնիլիլ և յետոյ միաւորելով ընդհանուր ժո-  
ղով կաղմել . ինչպէս է ֆուանսայի Աղջային ժողովը : Նոյն-  
պէս խորհուրդ մը կընոյ մասնախորհուրդներու բաժնիլիլ և  
յետոյ միաւորելով ընդհանուր խորհուրդ կաղմել , ինչպէս է  
յիշեալ երկրին Պետական խորհուրդը :

ՕՐՍԿԱՐԴ ORDRE DU JOUR . — Օրական խնդիր ըսել է ոյսին-  
քըն այն օրվան վիճելի կամ վիճարանութեան կարգը  
նոյն աւուր եկած խնդիր : Այս բառով՝ խնդրոց տօմարին  
մեջ արձանագրված բոլոր խնդրոց ցանկն իմանալու չ'է ,  
ինչպէս մինչեւ ցարդ իմացան շատեր ուստի ծաղեցան  
անօդուտ վիճեր , հարցապնդումներ , թիւրիմացումներ ,  
(malentendu) և ժամանակի կորուստ : Արդարանան դուցէ  
այդ եղածները՝ դիւանին մեջ խնդրոց արձանագրի մը  
պակսութեան պատճառով :

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ INITIATIVE.— իբր նախաձեռնարկութիւն . և նախաձեռնել՝ իբր նախաձեռնարկել . բանի մը ամենէն առաջ ձեռք զարնել, սկսիլ . աս' է բառին բռն նշանակութիւնը դրականութեան մէջ, և կ'ըսվի՝ զորօրինակ՝ նախաձեռն մարդ (homme d'initiative) խօսքի ու գործքի մէջ . պատերազմի կամ հաշտութեան նախաձեռնել (prendre l'initiative de la guerre ou de la paix) եւլ : — իսկ բեմական լեզուի մէջ՝ այդ հասարակ նշանակութենէն զատ՝ յատուկ նշանակութիւն մը տրված է այս բառին, որով իրաւունք առաջարկութեան օրինաց կը նշանակէ : Ատենով օրէնք առաջարկելու իրաւունքը միայն վեհապետին ու նախարարաց և բարձրագոյն ատեանի մը տրված էր . մինչդեռ ժողովները՝ որ ուժոյին ալ չէր կրնային կոչվիլ բարձրէն ծագած այդ առաջարկութեան հազիւ պղտի դիտողութիւն մը կրնային ընել բարեփոխութիւն (amendement) անունով . իսկ լուսաւորեալ դարուս մէջ այդ իրաւունքը 'զիւր օրինաւոր տէրը դտաւ, օրէնսդրական ժողովներու ոնցաւ : Երեսփոխանական դրութեան մէջ, մարդկային օրէնք մը՝ արդար ըլլալու համար, որոնց վրայ որ տ'իշխէ անոնք կ'առաջարկեն ու կը վճռեն մէջերնին, որպէս զի օրինազանցը արդարապէս պատժիլ : Արդ՝ հասարակութեան այդ իրաւունքը՝ միշտ իրմէ ծագած՝ 'զինքը ներկայացնող ժողովի մը բեմէն կու դոյ կը բխի բեմէն առաջանաւունքն անուամբ (initiative parlementaire) . 'զոր ամեն երեսփոխան կը վսյելէ, և որում ամեն երեսփոխանական վարչութիւնք կը դիմեն՝ առաջարկութեան ձեւով խնդրելու անկէ իրենց հաստատելուզած օրինաց վեհավճիռը : Այսօր, բեմական նախաձեռնութիւն՝ օրինաց առաջարկութիւն ըսել է և ո'չ ուրիշ բան :

ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ AMENDEMENT.— բարեփոխել amender — ըսել է՝ առաջարկեալ փոփոխութիւն մը որ ինդըին հիմին չը դպչելով՝ զանի կը բարւոքէ յաւէտ կամնուազ իր ձեւին մէջ : Հասարակ լեզուի մէջ ալ փոփոխութիւն ի լաւագոյն կը նշանակէ ամեն բանի համար : Հոմանիշ են՝ բարեփոխութիւն, սբբագրութիւն, վերաբերութիւն :

(réforme) . Արք բարւոքում ըսել կ'ուղեն։ Սրբագրութեամբ սիալ մը կ'ուղղվի , մոլութիւն մը , արատ մը կը վերնայ . բարեփոխութեամբ՝ լաւադոյն կ'ըլլայ ցանկալի յատկութիւններ ըստանալով . իսկ վերակերպութեամբ՝ բոլորովին առարկան կը փոխվի : Կը վերակերպի մարդ իր անկարգ վարքը բոլորովին ներհակ վարքի մը փոխելով :

ԶԵՌՎՊԱՀՈՒԹԻՒՆ ABSTENTION.— ՃԵՌՆՎՊԱՀԵԼ s'abstenir . — իբր ճեռք պահել բանէ մը , չը մօտիլ . իր ամեն առանձը ոյս փուանկ բառերուն կը պատասխանէ թէ հասարակ և թէ բեմական լեզուի մէջ ուր մանաւանդ քըւէի չը մասնակցիլ կը նշանակէ :

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ PRÉSENTATION.— ԿԵՐԿԱՅԵԼ présenter.

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ REPRÉSENTATION.— ԿԵՐԿԱՅԱՅՆԵԼ représenter

Այս երկու բառերը հոմանիշ կը թըւին և են իսկ տառօրէն . բայց ըստ իմաստին հականիշ են : — ԱԵկին մէջ առարկան թանձրացեալ կերպով այսինք նիւթապէս ներկայ է . իսկ մէկալին մէջ ընդհակառակ առարկան բացակայ է նիւթապէս և բարցապէս միայն է ըմբռնելի : Զորօրինակ հետո երեկ եղբայրդ , կրյայ զինքը նախարարին ներկայակել . (հո՞ս առարկային նիւթապէս ներկայութիւնը հարկաւոր եղան) : Դիեսպանն իր տէրութիւնը կը ներկայացնէ օտար երկիրներու մէջ , վասն զի հո՞ս իր տէրութիւնը նիւթապէս բացակայ է (հո՞ս նիւթապէս բացակայութիւն հարկաւոր է , չէ նէ ներկայացնելու հարկ չը մնար) : Վերջապէս , ներկայացնել առարկայի մը դերը կատարելով զանի մոքի յանդիման առնել , յիշեցնել է . մինչդեռ ներկայել նոյն ինքն առարկան աչքի առջեւ յանդիման բերել է : Թէ հասարակ և թէ բեմական լեզուի մէջ միօրինակ կարեւոր է ոյս տարբերութիւնը : Ուստի ըսելու չ'է ընտրելեաց ցանկին համար ներկայացման ցանկ այլ ներկայման ցանկ . ըսելու չ'է առաջարկութիւն մը կամ ծրագիր մը ներկայացնել այլ ներկայել : Ֆրանսերէն գիտցող քլաւ կը թափանցեն ոյս բառերուն անշփոթելի տարբերութիւնը երև թարգմանելուղեն ք'ընդունակ պատճեն է իրարու տէղ անխտիր գործածել : Աեր լեզուին

մէջ այս շփոթութիւնն եղած է մինչեւ հիմա , բեմական լեզուն զարդացած չ'ըլլալուն համար . իսկ այսուհետեւ աններելի կը թըւի եթէ կ'ուղենք լեզունին ճշդել և իրարու խօսք հասկնալ :

Ներկայ կանոնադրութեան մէջ գործածված քանի մը բեմական բառից նոր առմանց և տարբերութեանց վրայ 'զայս համառօտ ծանօթութիւնը՝ գուցէ ոչ անօդուա՛ յաւելու աստանօր համարձակեցաւ խմբագիրը :

Բ.







Դիմ = 6 բոլոր

Ժաղավարանին Տախից յատկացեալ:





5053

5054

5055

013

014

ՀՀ Ազգային գրադարան



NL0001220

ՀՀ Ազգային գրադարան



NL0001219

ՀՀ Ազգային գրադարան



NL0001218

